ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1886. ՅՈՒՆՎԱՐ № 1 ԳԵՏՐՎԱՐ. Գ. ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եր.

1. Ուսուցման գլխաւոր կանոնները 1
2. Մանկական խաղեր և նոցա նշանակութիւնը. 6
3. Յանկայի Ներսէս պատրիարքի անմահ յիշատակին 14
4. Իմ երգ (բանաստ.) 25
5. Ինչպէս պէտք է տարել բաղդաւոր լինելու համար 26
6. Առ համակրելի Մանկավարժանոցի խմբագրութիւն 33
7. Կանոնաւոր մարդ լինելու համար անհրաժեշտ է գեղեցկութեան ճաշակը 37
8. Արդարև այս այս որդի Աստուծոյ էր (բան.) 41
9. Ախալքալաքի Հայ երիտասարդութեան ուղերձ առ գիր Թորէն Ծ. Վ. Սահակեանէ. 42
10. Խմբագրական յիշատակարան 46
11. Յաւելուած 54
12. Խմբագրութեան պատասխանները կազմի 2 երեսում .....
13. Մանուցմունք, կազմի 3 և 4 երեսներում..

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ՏՊԱՐԱՆ
1886

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Երեւան. Ս. Բ. Ն. Ստացանք 6 ման. Մանկավարժանոցի երկու օրինակի գինը, մին—Դպրանոցի և միւսը— Ձեզ համար։ Համբերութիւնը կեանք է, ասվումէ, և Մանկավարժանոցը առաւել պիտի զգայ այս ճշմարտութիւնը։ Հետզհետէ գանագան կողմերից ստանումէ սա համակրութիւն իւր ուղղութեան և օգուտ համար։ Գոհութիւն Աստուծուն։ Դուք գիտէք, պատուական պարոն, թէ որքան քաջալերութիւն են մեզ համար ձեր գրած խմաստալի տողերը։ Անկեղծ յարգանքով ընդունումէ Մանկավարժանոցը Ձեր աշխատակցութիւնը։ Սակաւաթիւ ազնուամիտ ուսուցիչներից յետոյ, երբ սակաւաթիւ բանիմաց հայ տեսուչներն էլ կսկսեն գործով համակրել Մանկավարժանոցին, ուրեմն կարող ենք առաւել մխիթարված աշխատել անդադար։

Թիֆլիս, Բ. Ն. Ստացանք 3 ման.։

Էջմիածին, Զ. Տ. Զ. Ստացանք 3 ման.։

Ախալցխա, Ա. Ա. Ստացանք 3 ման.։

Ախալցխա, Ն. Ս. Ստացանք 3 ման.։

Ախալցխա, Գ. Վ. Ստացանք 6 ման. 1885—1886 թուերի համար։

Բաթում, Է. Մ. Ստացանք 3 ման.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Իւրաքանչիւր տեսրը 2 թերթ։ Երկու ամիս 1 տեսր։ Տարեկան գինը 3 ման.

Հասցէն. Редакція МАНКАВАРЖАНОЦЪ.

1886. ՅՈՒՆՎԱՐ № 1 ՓԵՏՐՎԱՐ Գ. ՏԱՐԻ

Faisons notre devoir, le reste est vanité. (Մենք մեր պարտքը կատարենք, մնացածն ունայնութիւն է։)

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ.

Տարրական կամ սկզբնական դպրոցներում աւանդած ուսումը պէտք է սերտ կապված լինի մանուկների բնական բարոյական կրթութեան հետ, նա պիտի բազմակողմանի կերպով զարգացնէ նոցա։ Տարրական ուսումը մանուկներին պէտք է հաղորդէ բարի սովորութիւններ, հարստացնէ նոցա մտաւոր աշխարհը կեանքի համար օգտաւէտ պաշարով, նա պիտի զարթեցնէ նոցա մէջ սէր ձգտումն դէպի ինքնակրթութիւն, դէպի բարոյական կատարելագործութիւն։ Իւրաքանչիւր սկզբնական դպրոցի նպատակը պէտք է լինի այդպիսի կրթող դաստիարակող ուսուցումը։ Այդ նպատակին հասնելու համար ուսուցումն անշուշտ պիտի լինի բոլորովին գ ո ր ծ ն ա կ ա ն, պ ա ր զ և մ ի ա ն գ ա մ ա յ ն հ ա ս ա ա ա։

Այդպիսի կրթական ուսման էական յատկութիւններից իւրաքանչիւրն ամեն մի ուսուցչին պարտաւորացնում է կատարել այն կանոնները, որոնք մշակված են դանազան տղաների և ժամանակների դերազանց մանկավարժների դարերով վորձերով, ուսումնասիրելով առ հասարակ մանկական բնաւորութիւնը:

Այդ կանոնները ցոյց են տալիս ուսուցչին թէ որն է այն ուղիղ ճանապարհը, որ տանում է դէպի կրթական ուսուցման ձեւը:

Ա.) Կրթութեան ճշտութիւնն ու արդարութիւնն պարունակվում է 1) ուսման նիւթի իսկական բովանդակութեան և 2) նորա ճիշտ և հաւատարիմ բացատրութեան մէջ: Աւանդելի նիւթի բովանդակութեան հաւատարմութիւնը այն գլխաւոր, էական պայմանն է, որ բարերար ազդեցութիւն գործելով մանուկների վերա, օգնում է նոցա յառաջադիմութեանը: Այդ հիման վերա ուսուցիչը պէտք է հաղորդէ այնպիսի գիտական տեղեկութիւններ, որոնք ներկայացնում են անհերքելի ճշմարտութիւն: Այդ բանին հասնելու համար ամենաձեռնտու միջոցը համարվում է աւանդելի նիւթի խոշմատարը պատրաստելն ուսուցչի կողմից: Պարզ բան է եթէ ուսուցիչը իւր դասին վերաբերեալ ընտիր գիտական գրքերից օգուտ է քաղում, քննում է իւրաքանչիւր միտքը, իւրաքանչիւր բառը, դեռ ևս դասատուութեան նախագիծը կազմելուց առաջ, ապա մի այդպիսի նախապատրաստութիւնն ի հարկէ կարող է հեռու պահել դասատուութիւնը սխալներից, անճշտու-

թիւններից։ Սակայն կարող են այնպիսի դէպքեր տեղի ունենալ, որ աշակերտները կասաջարկեն ուսուցչին դասին չվերաբերեալ հարցեր և սա անպատրաստ լինելով այդ հարցերին, չէ կարող պատասխանել, որը յաճախ կարող է տեղի ունենալ ուսուցչի աշակերտների հետ ունեցած խոսակցութեան ժամանակ։ Այդպիսի անակնկալ հարցերը երբեմն դժուարացնում են նոյն իսկ փորձված ուսուցչին։ Ուստի նա կարող է և սխալվել։ Այսպիսի դէպքերում հարկաւոր է անշուշտ ուղղակի խոստովանել մանուկների առաջ և ոչ մոլորեցնել նոցա, ինչպէս այդ անում են անբարեխիղճ ուսուցիչները։ Աշակերտի որևիցէ հարցին չկարողանալով պատասխանել, ուսուցիչը ուղղակի պէտք ասէ թէ ես այդ չգիտեմ այժմ, բայց տեղեկութիւն կքաղեմ գրքերից ու կասեմ ձեզ։ Ուսուցչի այսպիսի վարմունքը նրա սխալմունքի վերաբերութեամբ հաստատում է աշակերտների մէջ ճգտումն դէպի ճշմարտութիւն, որն ըստ գիտնական Լէսսինգի ասութեան, աւելի թանկագին է քան թէ նոյն իսկ ճշմարտութիւնը։

Ճշմարտութիւնը պէտք արտայայտել պարզ կերպով, առանց փքուն և դատարկ խօսքերի։

Բ) Ուսուցման գործնականութիւնն կայանում է 1) նիւթի ընտրութեան, 2) նիւթի բաժանման աշակերտների օյժերի համաձայն և 3) ուսուցչի մեթոդի, ձևի ու եղանակների մէջ։

1) Ուսուցման նիւթի ընտրութեան ժամանակ ուսուցիչը պէտք ուշք դարձնէ այն առարկաների վերա, որոնք կազմումեն մանուկների կրթ-

նական բարոյական կրթութեան և մտաւոր զարգացման հիմն։ Այդպիսի առարկաները հետևեալներն են. ա) կրօն, բ) գրագիտութիւն, գ) թուել, դ) երգեցողութիւն և ե) մարմնամարզութիւն։ Ուսուցման այս շրջանը, որ սահմանված է օրէնքով, սկզբնական կրթութեան խնդիրն է կազմում։

2) Ուսման նիւթի բաժանումն աշակերտների ոյժերի համաձայն ուսուցման գործնականութեան երկրորդ կանոնն է։ Այս դէպքում ուսուցիչը պէտք է վարվի այնպէս, ինչպէս որ խոհեմ մայրը իւր երեխաներին կերակուր տալու մէջ։ Մայրը տալիս է նոցա մի այնպիսի կերակուր, որ յարմար լինի կազմուածքին։ Այսպէս օրինակ թոյլ կազմուածք ունեցող երեխաներին մայրը պէտք է տայ թեթև կերակուր (կաթ), իսկ ամուր կազմուածք ունեցող երեխաներին առաւել սննդարար կերակուր (օր. միսը) և միևնոյն ժամանակ որոշ քանակութեամբ։ Նոյնպէս պարտական է վարվել ուսուցիչը իւր աշակերտների հետ նոցա հոգեկան կերակուր տալու ժամանակ։ Նա պէտք է աչքի առաջ ունենայ մանուկների սեռը, հասակը և նոցա զարգացման յայտնի աստիճանը. ուսուցիչը պիտի առաջնորդվի հետևեալ կանոնով. «մի անգամից շատ կերակուր չտալ», որովհետև աւելորդ կերակուրը օգտաւէտ չէ լինում ոչ կազմուածքին, ոչ հոգուն։ Ընդհակառակը նա կարող է ամեն ժամանակ վնասել նոցա։

Ուսուցիչը պիտի չշտապէ, որովհետև ինչպէս մարմնական, նոյնպէս հոգեկան կերակրի հա-

մար հարկաւոր է ժամանակ։—«Որքան ծանր կդնաս, այնքան հեռու կերթաս, ահա այն հին ռուս առածը, որ ամենից լաւ հաստատումէ դպրոցական գործնականութիւնը։ Այն բոլոր նիւթը, որը աւանդվումէ դպրոցում աշակերտներին, պէտքէ լինի պարզ և հասկանալի։

3) Ուսուցման գործնականութեան երրորդ կանոնը մէտոդի, ձևի և եղանակների յաջողակ ընտրութիւնն է։ Տարրական դպրոցներում աւելի յարմարաւոր է վերլուծական (անալիտիքական) մէտոդը նորա համար, որ դա լաւ միջոց է ուսուցչի համար իւր աշակերտների մտաւոր պաշարի հետ ծանօթանալու։ Նոցա շրջապատող կեանքից վերցրած տեղեկութիւնները վերլուծելով, ուսուցիչը այսպէսով մի որոշ գաղափար է կազմում իւր աշակերտների մտաւոր զարգացման աստիճանի վերաբերութեամբ։ Ուստի նորան միջոց է տրվում գիտենալու թէ որտեղից ինչպէս սկսելու է ուսուցման գործը։ Այնուհետև ինչպէս ուսուցման առարկան, նոյնպէս և աշակերտների զարգացման աստիճանը ցոյց կ'տան թէ որ մէտոդը պէտքէ գործ դնէ ուսուցիչը, եթէ սա ցանկանումէ ստուգել իւր աշակերտների ունեցած գաղափարների կամ նոցա տեղեկութիւնների ճեռք բերած ճշտութիւնը, այն ժամանակ գործ է ածում վերլուծական մէտոդը։ Իսկ եթէ դիտաւորութիւն ունի մասնաւոր, տեսական գաղափարներից սեռական գաղափարներ կազմելու, այն ժամանակ նա գործ է ածում անդրլուծումն (սինտէզ)։ Այս վերջին մէտոդը ուսուցիչը գործ է ածում և այն ժա-

մանակ, երբ նա ժողովումէ իւր աշակերտներից առանձին փաստեր, ուսումնասիրումէ և ընդհանրացնելով նոցա (այսինքն գտնելով նոցա մէջ ընդհանուր յատկանիշները) գալիս է որ և իցէ հետևանքի։ Ուրեմն վերոգրեալ մէջբերումները ուսուցչի ձեռին լաւ միջոց են դառնում առաջնորդելու իւր աշակերտներին դէպի որևիցէ ճշմարտութիւն։ Նորա հմտութիւնը միայն նորա մէջ կիկատարեալ թէ երբ, որ ժամանակն և ինչ նպատակին հասնելու համար է նա առաջնորդելու նոցա դէպի այդ ճշմարտութիւնները։ Ուսուցչի հմտութիւնը ձեռք է բերվում ի հարկէ գործառնութեամբ և նորա աշխատութեան արգասիքների խիստ գնահատութեամբ։

Թարգմ. Ս. Տ. Ս.

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ ԵՒ ՆՈՅԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

Ինչպէս իւրաքանչիւր մարդի, այնպէս և իւրաքանչիւր ժողովրդի երեխայութեան մէջոցին մեծ տեղ են բռնում խաղերը։ Համարձակ կարելի է ասել, որ իւրաքանչիւր ժամանակների սերունդներն և խաղացել են։ Բաւական է յիշել, որ բացի բազմաթիւ յոյն և հռովմայեցի իմաստասէրներից և պատմիչներից, Պլուտարքոսի և մանաւանդ Կվինտիլիանի գրուածներում մանկական խաղերի վերաբերմամբ բազմաթիւ դեղեցիկ նկատողութիւններ ենք կարդում։ Բայց այնուհետև մի

քանի հարիւր տարիներ պիտի անցնէին, մինչև որ հումանիստները և գլխաւորաբար Էրազմը, մոռացութեան փոշուց հանելով, կրկին անգամ մանկական խաղերի մեծ նշանակութիւնը քարոզէին, գարթեցնէին։ Բայց զոքա անհատական ձայներ էին և ժամանակաբար նոցա վերա ուշք դարձնող չեղաւ։ Մինչև իսկ Ժ. Ժ. Ռուսսոն, որի նշանաբանը «բնականութիւն» խօսքն էր, շատ փոքր ուշք դարձրեց մանկական բնաւորութեան այս բնական կարիքի վերա և մինչև իսկ կարելի է ասել—չէր հասկանում թէ ինչ նշանակութիւն ունի խաղը մանուկի համար։

Պիէտիստների կրթութեան գործի մէջ ունեցած ազդեցութեան շրջանը թէև շատ յաջող էր մանկավարժութեան զարգանալուն համար, բայց միւս կողմից կորստաբեր էր մանկական խաղերի վերաբերմամբ։ Նրանք, օրինակ, ասումէր որ երբէք թոյլ չէր տալ մանուկին պարել, իսկ Ֆրանկէն աւելի լաւ էր համարում իւր ժրաջան աշակերտներին շոկոլատ բաժանել, քան թէ թոյլ տալ, որ բայց երկնքի, ադամ օդի մէջ խաղան—զուարճանան, երգեն և պարեն...։ Բայց բարեբաղդաբար շուտով անհետացաւ այս ուղղութիւնը։ Մարդասէրների մանկավարժական աշխարհում ճեռք բերած ազդեցութեամբ—նոր շրջան սկսվեցաւ և մանկական խաղերի համար։ Այստեղ առաջինը պէտք է դնել Դուտսմութիսին, որը «Խաղերի հաւաքածոյ» և «Մանկական մարմնամարզութիւն» գրքերի մէջ մանկական խաղերի մեծ նշանակութիւնը ընդունելով և տեսաբէս ևս պար-

գելով հանդերձ, զուգընթացաբար իւր Շնէպֆէնտալում հիմնած ուսումնարանում նոցա գործադրութիւնն էր ցոյց տալիս հասարակութեան։ Այսպէսով ուրեմն ընդունվեցաւ մանկական խաղերի մեծ նշանակութիւնը։

Այժմ աշխատենք պարզել, թէ ինչ է խաղը և թէ ինչ մանկավարժական նշանակութիւն ունի։

Շլէյէրմախէրը և Հէրբարտը շատ ճիշտ են նկատում որ «խաղը կրթութեան համար օգտակար լինելու համար, պէտք որ նա որոշ և ամբողջացած մի բան լինի»։ Մօլէրը ճշտութեամբ որոշումէ խաղը աշխատանքից, ասելով, որ «գործունէութիւնը—խաղի միջոցին գլխաւոր նպատակն է, մինչդեռ աշխատանքի ժամանակ արդէն ոչ թէ գործունէութիւնը, այլ որոշեալ նպատակին հասնելն է իսկ զուարճութիւն պատճառում»։ Բայց այս ճշմարիտ է միայն մեծերի վերաբերմամբ, քանի որ մանկական խաղերը էականապէս տարբերվումեն հասակաւորներից։

Մեծերի համար խաղը լոկ միջոց է զանազան նպատակների հասնելուն, մինչդեռ մանուկի համար դա նոյն իսկ նպատակն ու լուրջ մտաւոր գործունէութեան արդասիք է։ Մանուկը մանուկ է, երբ խաղումէ նա. խաղն միջոցին նա լիովին իրան այն աշխարհումն է զգում, որը նոյն իսկ ինքն է իւր համար պատրաստել—ստեղծել։ Ուրախութեան ժպիտը պակաս չէ խաղացող մանուկի դէմքից. նա մեծ բաւականութիւն է զգում—երբ վերջապէս յաջողումէ օր. փայտի կտորներից մի շինութիւն գլուխ բերել. բայց նա ցաւում—նե-

զանում և մինչև իսկ լալիս է, երբ քամին քանդումէ այն։ Այս ամենը ցոյց է տալիս, որ գործունէութիւնը ինքնըստինքեան բաւականութիւն չէ պատճառում մանուկին և որ նա աշխատումէ որոշեալ նպատագծով յայտնի նպատակին հասնել։

Պարզ է, որ խաղը մանուկի համար բնական պահանջ լինելով, պէտքէ միջոց տալ նորան բաւականութիւն ստանալուն։ Բայց այս խօսքերից չպէտք է եզրակացնել, որ խաղը կարող է և հրամանով լինել. ընդհակառակն պէտքէ աշխատել, որ նա բնականաբար յառաջանայ, հակառակ դէպքում մենք չենք կարող լաւ հետևանքի հասնել։ Ճշմարիտ է, այդ դէպքում էս կարելի է մանուկների երեսին ուրախութիւն տեսնել—բայց դա սրտի խորքից բղխած անկեղծ ուրախութիւն չէ. մինչդեռ անհրաժեշտ է, որ մանուկի կեանքը ամբողջապէս այդ միջոցին իսկ ուրախութեամբ լցված լինի, որ դա կարողանայ լինել իբրև հանգստութեան միջոց, որովհետև մանուկի խաղը պէտքէ նորա հանգստութեան տեղը բռնէ։

Յայտնի է, որ բնութեան մէջ ամենայն տեղ աշխատութիւնն ու հանգիստը փոխադարձաբար տեղի են տալիս միմեանց և այդ աւելի զգալի է մանաւանդ մարդիս վերաբերմամբ, երբ նա ֆիզիքապէս և մտաւորապէս յոգնած է լինում։ Բայց հանգստութիւն ասելով չպէտքէ դատարկապորտութիւն և քուն հասկանալ. գործունէութեան փոփոխութիւնը ինքն ըստ ինքեան արդէն հանգստութիւն է։ Եւ ահա, մանուկի աշխատութեան փոփոխութիւնը—խաղը պիտի լինի և ամեն

կերպ պէտք աշխատել, որ մանուկը չսովորէ իւր հանգստութիւնը պարապ մնալում գտնել։

Բայց խաղը բացի իւր հանգստութեան միջոց և մանուկին անկեղծ ուրախութեան աղբիւր լինելուց, նա և՛ մեծ կրթիչ միջոց է։ Մեր նախնիքս յաճուսածում գտնգատվել էինք, որ ուսումնարանը չէ կարող իւր նպատակին հասնել, քանի որ մեր ընտանիքը այնպէս չէ կազմակերպված, որ հասկանալով դաստիարակութեան իսկական նշանակութիւնը, կարողանար «մանուկներ» պատրաստել...։ Մենք իրաւունք ևս ունէինք։ Մեր ընտանիքը ուսումնարանին տալիս է կամ այնպիսի մանուկներ, որոնք իրանց տարիքից բարձր հասունութիւն ունին և կամ այնպիսիներ, որոնք ոչինչ պատրաստութիւն չունին...։ Դուցէ մեզ հարցնեն, թէ ինչ պէտք անէ ընտանիքը. կպատասխանենք.—ընտանիքը մանուկին պէտք սովորեցնէ կատարել իւր զգայարանները։ Ահա թէ ինչպէս. նեղմադրենք որ գարուն է, դնում էք պարտէզ. բաղմաթիւ և բազմատեսակ ծաղիկներ իրանց հոտերովն ու գեղեցկութեամբ հիանալի տեսարան են ներկայացնում։ Այդտեղ իսկոյն նկատումէք մանուշակը, մեխակը, շուշանը և այլն ձեր ծանօթ ծաղիկները։ Բայց ահա և մի օրիորդ սիրուն ծաղիկ, բայց չէք նկատում այն—որովհետև դեռ չէք ճանաչում այդ ծաղիկը։ Բայց բաւական է որ մին ծանօթացնէ քեզ նորա հետ, իսկոյն նորան ևս կնկատես, ինչպէս շուշանը, մեխակը և այլն և այլն։ Հասկանալի է, որ մենք աւելի տեսնումենք այն, ինչ որ ճանաչումենք։ Մի և

նոյն բանն է լսելիքի (օրինակ մենք աւելի շատ ճանաչումենք մեզ ծանօթ թռչունների ձայնը) և ուրիշ զգայարանների համար։ Այժմ հասկանալի է թէ ինչպէս կարելի է խաղի միջոցով զգայարանները զարգացնել։ Ինութիւնն է, որ իւր յատկանական շարժողութեամբ մեզ բոլոր առարկաների էութիւնը, սկիզբն ու վախճանը ցոյց տալով, կարող է մանուկի աչքն ու ականջները բանալ։ Տարէք նորան դաշտ, ցոյց տուէք վարդը, ցանքը, կանաչ և հասած արտերը, ցոյց տուէք հունձը, խուրձերը, կալը, տարէք նորան ջրաղաց, հացագործին—հաւատացած եղէք, որ երեկոյեան նա աւելի ախորժով կուտէ հացը, որովհետև նա արդէն տեսաւ, թէ քանի՞ քանի՞ ձեռներից պիտի անցնէր, ինչքան աշխատանք պիտի թափէր մինչև որ մայրը կշտացնէր նորան...։

Խաղը նպաստումէ թէ ֆիզիքական և թէ մրտաւոր ոյժի զարգացմանը։ Երբ բաց երկնքի տակ, ազատութեան մէջ խաղումեն տղաները, սովորաբար նա է յաղթող հանդիսանում, ով որ աւելի ուժով ձեռներ ունի և արագան է։ Բայց միայն ճարպիկութիւնը, ոյժն ու վազուկութիւնը բաւական չեն որ ամեն տեղ էս յաղթութիւն ձեռք բերվի։ Կնմանի—ի մէջ օր. դէմքի գծագրութիւնից որոշ եզրակացութեան հասնելու մտաւոր գործողութիւն է պէտք, գնդախաղում—ձեռքի լաւ ուղղութիւն և աչքի շտկութիւն, աչքակապուկի մէջ—նուրբ լսողութիւն և այլն և այլն։ Խաղի մէջ է սովորում տղան և փոքր անհամութիւնների ու ցաւի դիմանալուն. շատ անգամ ձիւ-

նը, անձրևը, ցուրտը աւելի ևս զօրացնումեն նորա ուրախութիւնը։ Տաքն ու ցուրտը նորան չեն սարսափեցնում։

Բայց չմոռանանք, որ այս խաղերը միայն մանչերին չպէտք մատչելի լինին. աղջիկներն ևս պէտք խաղան։ Բայց մեր մէջ անհրաժեշտ բան է այդ։ Մարմնամարզութիւն... է, այդ սրբապղծութիւն է հայ մօր համար։ Ցաւանի է թէ որքան դանդաղաշարժ, քաշվող, ուշ ըմբռնող են լինում առհասարակ նոր ուսումնարան մտնող մեր տղաները ընդհանրապէս և աղջիկները մասնաւորապէս. որովհետև նոքա տանը զբաղված են եղել իրանց ֆիզիքական և մտաւոր ոյժերը զարգացնելուց։ Այդ անբաղդ էակները իրանց վերա վստահութիւն չունենալով, նոցա իւրաքանչիւր արարքը, իւրաքանչիւր քայլը և շարժուածքը խախուտ է, նոքա շուարումեն...։

Խաղն է նոյնպէս որ տղային ծանօթացնումէ արտաքին աշխարհի առարկաների հետ. նա պէտք է գիտենայ նոցա անունները, նոցա մասերի յարաբերութիւնը և այլն։ Աբզէն մանկական հասակից պէտք տղան պարծենայ, որ առանց ուրիշի օգնութեան կարող է կառավարվել, իւր կտրած «լարը» ուղղել (Վիլհելմ-Տել) և այլն։ Կարելի է հաստատապէս ասել, որ խաղի մէջ աչքի ընկնող տղան կեանքում ևս յաջողութիւն կունենայ. այդպէս են եղել բոլոր հռչակաւոր մարդիկ։ Բայց պէտք աշխատել, որ տղայի ձեռքում լինի աւելի հում նիւթ, քան ինչ և իցէ առարկայի տիպարը։ Այդ կողմից աւե-

լի յաջող հանգամանքի մէջ են մեր հասարակ ընտանիքի զաւակները. նոցա մանչերը իրանք են շինում իրանց խաղալիքները (հոլ, գնդակ, չիլիկ և այլն), իսկ աղջիկները շինումեն խրձեկ (кукла), մինչդեռ հարուստ ընտանիքներում խրձեկի փոխանակ մանուկի ձեռքը պճնազարդված աշխարհասէր կնոջ տիպարն են տալիս: Պէտք աշխատել և մանկական պարահանդէսներին վերջտալ...:

Մանկական խաղերի մի մեծ նշանակութիւն ևս այն է, որ այդ ժամանակից է գլխաւորապէս հիմք ձգվում այն սերտ ընկերականութեան, առանց որի մարդկութիւնը ոչ մի քայլ չէր կարող առաջ գնալ:

Քանի մանուկը մեծանումէ, դորա համեմատ ևս նորա ուսման շրջանն է ընդարձակվում և դըժուարանում. Ճիշդ այդպէս պէտք լինին և մանկական խաղերը. նոքա աստիճանաբար պէտք մօտենան մարդկային այն բարձր կոչմանը, որը աշխատանք ենք անուանում: Խաղ և աշխատանք—միայն զանազան խօսքեր են: Ինչպէս որ կոկոնից ծաղիկն է զարգանում, այնպէս ևս մանուկի զուարթ խաղը պէտք հասակաւորը անձի լուրջ գործունէութեան փոխվի: Ճիշդ այդպէս պէտք լինի և աղջկան խաղը, որը գնալով ընտանիքի մօր հոգսերին պիտի փոխվի:

Ահա այս է խաղի վերջին և միանգամայն ամենաբարձը նմաստը: Թող դաստիարակչութեան վեհ պաշտօնը ստանձնող իւրաքանչիւր անձը դիմի, հասնի դորան:

Դարասուրաղար Մ. Պ.

ՅԱՆԿԱԼԻ ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ.

Սիրելի ընթերցող, թերևս այսօր և դու հոն էիր, Մայր Եկեղեցին, այն բազմամբոխ Հայ Ժողովրդեան մէջ որ եկած էր վերջին ողջոյն մը նուիրել Ներսէս Վարժապետեանի մարմնոյն, և դու յուզուեցար ու հեծեցիր ինձ նման, տեսնելով մեծ անձնաւորութիւն մը քայքայուած ու սև վիհը բացուած ու կաղմ կլնելու նորա յետին մնացորդքն։ Աւաղ, ինչ ցաւագին տպաւորութիւն կը կրէ մարդ, երբ կը մտնէ տեղ մ՚ուր ամեն ինչ սիրելի էակի մը վրայ կը խօսի տակաւին և ուրիշ սակայն անհետացած գացած է անդարձ այդ սիրեցեալ էութիւնն։ Կենաց մէջ ամենաբուռն կերպիւ այդ վիշտագին զգացմամբ երկիրս համակուեցայ. մին երբ յետ մահուան իմ ամենասիրելի մօրս, աչք չածեցի հայրենի տանս չորս դին ու չգտայ հոն զայն որոյ մատանց հետքն կը կրէր ամէն ինչ և որոյ շունչն դեռ կը ծփար սենեակներու մթնոլորտին մէջ և երկրորդ երբ այսօր Մայր-Եկեղեցւոյ տաճարը մտնելով իւր դագաղին մէջ պառկած ու անշունչ տեսայ զնա որոյ ձայնն այնչափ անգամ թնդացուցած էր այդ կամարներն և որ այնչափ անգամ վեհաշուք երևցած էր անդ Ժողովրդեան։ Այդպիսի պարագայն մէջ կենաց ու մահուան հակապատկերն աւելի ազդու կը ներկայանայ մարդուն, աւելի ապշեցուցիչ, և մարդկային միտքն արագ բաղդատութիւն մ՚ընելով անցելոյն ու ներկային, առաւել հզօրապէս կը ճնշուի անկութեան գաղա-

փարէն։ Այսօր կ'ակնարկէի Պատրիարքական գահուն ու կը կարծէի բազմած տեսնել անդ Ներսէսն իւր պատկառելի վեհութեամբ. կը նայէի դրան և ինձ կը թուէր թէ ահա Ներս կը մտնէ քահանայներէ ու վարդապետներէ առաջնորդուած ու կը յառաջանայ բարեպաշտ ամբոխին մէջէն որ կը ճեղքուի իւր առջև յարգալիր. կը դարձնէի աչքս ի բեմ ու դիմացս կը նկարուէր նա հայրապետական զգեստուք զարդարուած, թագ ի գլուխ, գաւազան յաջ ու քարոզող հազարաւոր բազմութեան որ կախուած կը մնար նորա քաղցրախօս պերճաբան շրթներէն ու կը կերպարանէր աչացս առջև Ներսէս Արքազանը, իւր բարձր ու գեղադիտակ հասակաւ, սև մազերով, կորովի նայուածքով, յանկուցիչ դէմքով, և երբ ապա կը դիտէի դագաղն ու կը խորհէի թէ հոն էր նա անշարժ, անզգայ, անկենդան, դիակնացեալ, ու չէր կարող այլ ևս բանալ աչերն, լսելի ընել իւր ձայնն, խօսիլ մեզ, ոգևորել զմեզ, զոգցես գերեզմանի պաղ քար մ'ալ կը ծանրանար իմ սրտիս վրայ ու կ'ընկճէր զայն, հոգիս մթութեան մէջ կը խարխափէր, և աչերս կը լուէին արցունքով։

Եւ ո՞վ չարտասուեց, ո՞վ չողբաց Ներսէս Պատրիարքի մահն. արևելքէն արևմուտք և հիւսիսէն հարաւ հնչեցին հեծութեան ձայներն և սուգ առին, ամէն երկնից տակ, սիրտք Հայկազանց, երբ համբաւն արագ սփռեց յընդհանուրս Հայոց Հօր մահուան ցաւալի բօթն։ Ի՞նչ ընդհանուր և եզական արտայայտութիւն սգոյ, ապացոյց այն խորին սիրոյն որով ամէն Հայոց սիրտք տոգորուած

էին Ներսէսի նկատմամբ։ Զնա չճանչցող ոք, ներկայ գտնուելով յուղարկաւորութեան հանդիսին, պիտի հասկնար իսկոյն թէ մեծ մարդ մ՚եղած էր նա, թէ գիտցած էր ամբողջ ազգի մը երախտագիտութիւնը շահիլ և սիրելի ու պատկառելի ընել զինքն ոչ միայն իւր ազգայնոց, այլ և օտարաց։ Մատաղ և յուսալի ուսանողութիւնն, ազգային ընկերութիւնք, եկեղեցականութիւնն, երեսփոխանք Ազգին, ժողովք և խորհուրդք, կառավարական պաշտօնատարք, աստիճանաւորք տարակրօն եկեղեցեաց, ներկայացուցիչք դեսպանատանց և օտար մամլոյն, ամենքն ալ, տխուր վշտաբեկ, ի սիրոյ մանաւանդ քան ի պաշտօնէ յորդորուած, կը շրջապատէին ողբացեալ Հայրապետին դագաղն ու անվերջ թափորը մը կազմելով վերջին անգամ մ՚ի տես կը հանէին նորա մարմինն բիւրաւոր ամենազգի ժողովրդեան ոչ թախծագէմ դիպուած էր ծովակոյտ ճանապարհաց ու անցից վրայ։ Խորէն Արքազանին բնաբանն ստոյգ բացատրութիւնն էր իրողութեան. «Եւ ժողովուրդն ելաց լալիւն մեծ, զի այր մեծ անկաւ յԻսրայէլ»։ Իսկ այսօր ուրչափ սրատաւրժ էր ժողովրդական վշտի արտայայտութիւնն. ամենուստ տեղացող ծաղկեայ խաչերու և պսակաց ներքև աներևոյթ եղած էր բարձրագոյն դագաղն. զոգոյես բովանդակ ազգի մը սիրտն, անհուն պսակի մը փոխուած, եկած էր բոլորիլ Ներսէսի մարմնոյն շուրջն. անթիւ լոյսերու և անհամար ծաղկանց մէջ կը հանգչէր նա. մահն պատրիարքական, կաթողիկոսական աթոռներէն աւելի բարձր

ու գերարիաւ զահոյք մը յօրինած էր իրեն. ստուգապէս մի այդպիսի դագաղ սեռամն է անմահութեան տաճարին. և եկեղեցականք ու աշխարհականք, ուսուցիչք և ուսանողք, երեսփոխանք և ժողովուրդք, մեծատունք և աղքատք, ջերմեռանդն, պատկառոտ, իր համբուրէին աբատասուալից զնա ծածկող նուիրական հանդերձքն որք կրկնակի սրբազան եղած էին։ Կարծես թէ անհնարին էր ժողովրդեան հաւանիլ որ ի հող ամփոփի իւր ամենասիրելի Հովուապետն, անհնար էր նմա համոզուիլ այլ ևս ոչ այլ ինչ կը մնար ի նմանէ, բայց եթէ ազի մ'ոսկրոտի որ գերեզմանի բաժինն էր. նորա սրտին ու մտայլ տենդունդին մէջ կռիւ մ'ըլլալ կը թուէր. պահանջեց որ գէթ մասառ մաս, տակառ առ տակառ ծածկէ զնա հողն, գողանայ իւր աչերէն։ Ազգային Երեսփոխանութիւնքն իւր նոտերը դադրեցուց, փակեցան ժողովք, փակեցան ընկերութեանց գործատեղիք, և մանկտին դպրոցաց սգայց զմահ մեծ վարդապետին։

Այսպիսի ընդհանուր և խոր սգոյ ատաքէն արժանի էր Ներսէս. նորա մահուամբ մեծ ոգի մը կ'անհետի Հայ աշխարհէն, լուսատիայլ ոստոյ մը կը մարի Հայութեան երկնից մէջ։ Զլսել զինքն այլ ևս մեր եկեղեցեաց մէջ, վարդապետող ոգնքան խոնարհութեամբ որչափ սրտագին սիրձաքաջութեամբ, չունենալ զայն մեր ժողովոց, մեր վարչութեան գլուխն երբև առաջնորդ արի ու լուսամիտ, չտեսնել զայն մեր վարժարանաց մէջ, երկնախրատոյս հրաւիրակ ի լոյս, մեր յառաջդիմական ճգտանց մէջ չգալ այլ ևս նորա աչն որ չէր պակսեր երբէք

կարկառելէ յօրհնութիւն և ի Թիֆլիս, զրկուել մի քաջ հովուէ, անձնուէր իւր հօտին երջանկութեան, մի Ճշմարիտ հասարակաց Հօրէ որոյ սրտէն կ՚անցնէին իւր զաւակները խոցող ամէն նետք և առ որ կարող էր վստահութեամբ դիմել ամէն վշտակիր ու կարօտեալ, և վերջապէս այն անապատին մէջ, ընդ որ կ՚ընթանամք տաժանաքայլ չնչմարել զինքն այլ ևս իբրև նոր Մովսէս գնացող մեր առջևէն, արդարև դառն ու անդարմանելի կորուստ մ՚է, ամէն ողբոց արժանի։ Ներսէս, թէ իբրև մարդ և թէ իբրև եկեղեցական, մին էր այն չքնաղագիտ անձնաւորութիւններէն որք պատիւ կը բերեն մարդկութեան և հպարտութիւն կ՚ազդեն Ազգին որ ծնաւ զնոսա։ Բնութիւնն օժտած էր զնա Ճոխաբարբ, և Երկինք զայն ստեղծելու ատեն կարծես ի մտի ունէր դերն որուն զնա կը սահմանէր և առ այն կուտար նմա ամէն կարևոր ու մոգիչ հանգամանքներ։ Գերազանցապէս համակրելի կերպարանքի մը կը միացնէր քաղցր ձայն մ՚որ կարող էր սակայն զգացմանց ամէն ելևէջներուն հետևիլ. սիրտ մ՚որ հնոց մ՚էր ամէն ազնիւ ու վեհ կրքերու, միտք մը սուր, թափանցող, հեռատես, ազատ, Ճկուն, քերթողի աշխոյժ ու երևակայութիւն և բերան ներշնչեալ ատենարանի։ Այսպիսի սակաւագիտ յատկութիւններով զարդարուած երևցաւ նա յանկարծ քսանամեայ վարդապետ, Խասգիւղի Ս. Ստեփանոս Եկեղեցւոյն մէջ, և ամէնքն կարծեցին տեսնել մի այլ Դանիէլ երկնազգեցիկ։ Ո՞ւստի ուսած էր լեզուն զոր կը խօսէր. ո՞ւստի այն իմաստութեան պատգամներն որք

իւր բերնէն կ'ելնէին. Ներսիսեան վարժարանէն ուր աշակերտած էր. — բայց իւր վարժապետներուն իսկ անծանօթ էր այդ բարբառ. Եկեղեցականէն որ ձեռնադրած էր զնա—բայց ոչ մի եկեղեցական, թերևս յօրէ անտի ուր լուռ էին Շնորհալին ու Լամբրոնացին, լսելի բրած էր ցայն վայր մի այսպիսի հեշտալուր, դիւթիչ, ոսկեդարեան, իմաստալից Ճարտարախօսութիւն։ Բնութիւնն էր իւր վարժապետը. Ներսէս իւր բնատուր ձրից մէջ գրտած էր սքանչելապէս արագ զարգացման մը միջոցներն. իւր բարձր բանականութեան մէջ կը գտնէր իւր քարոզած Ճշմարտութիւններն, և իւր հրաբորբոք սրտին մէջ Ճարտարախօսական այնպիսի հնարքներ որից գիտակ չէին հռետորք։ Այսպէս ինչ որ բնութիւնը կ'ընէ, անհամեմատ կերպով ի վեր է քան արդիւնքն մարդկային Ճգանց, և ամբոխն ալ բնազդումն ունի աստուածայնոյն, կ'զգայ ոգին որ երկնային մատին կնիքը կը կրէ, կը յարգ, կը հպատակի նմա, անոր կը յանձնէ յոժարակամ իւր Ճակատագիրքն ու կը հետևի նմա հլութեամբ։ Այսպէս եղաւ Ներսէսի ալ համար. այդ անուանն իսկ մարգարէական ու նախանամական բան մ'ունենալ կը թուէր Հայ ժողովրդեան համար. քարեբէն Աբրահամու որպիներ յարուցանելու կարող Աստուածն չէր ուզած արդեօք Ներսէսներու ա-ձիւնէն յաջորդ մը հանել նոցա ի փառս Հայաստանեայց Եկեղեցւոյ. և որչափ աւելի երիտասարդ Վարժապետեանին մոգիչ և նորանշան օ-ծութեամբ լի խօսքերուն կ'ունկնդրէր, որչափ աւելի նորա աւետարանական առաքինութիւնքն,

կրօնական լայն ու բարձրախոհ գաղափարներն, սահմանադրատէր օրինաւէր նախանձն, ազգասիրութեան եռանդն կը տեսնէր, այնքան ևս կը հաստատուէր իւր համոզման մէջ և կ'ամէին իւր յոյսերը։ Ռուսի և Ներսէս աստիճանէ աստիճան, բարձէ ի բարձ թուաւ արագաթիւ. և եպիսկոպոսական մատանին կրեց քսան և հինգ տարեկան. երեսուն և եօթն ամաց հասակին մէջ նստաւ պատրիարքական գահուն վրայ, և քառասունեւեօթնամեայ ամենայն Հայոց ճայնն անուանեց զնա Ս. Լուսաւորչի աթոռոյն գահակալ և գլուխ Հայաստանեայց եկեղեցւոյ, պաշտօն զոր սակայն չկրցաւ ընդունել և որոյ ընտրելութենէն իսկ հրաժարեցաւ կանխաւ, ոգեստաւ այն անողոք ախտին ճիրաններուն տակ որ երկար ատենէ ի վեր տիրած էր իւր մարմնոյն։

Պատրիարքական աթոռին փառք եղաւ աւելի քան փառք տուաւ ի նմանէ. իւր պաշտօնավարութեան շրջանն շքեղագոյն էջն եղաւ Հայ պատրիարքութեան պատմութեան։ Պարագայները չեն ստեղծեր զմեծ մարդը, այլ երբեմն կը հանեն նոցա մեծութիւնը. մի և նոյն պարագայից մէջ, ուր վսեմացաւ Ներսէս սովորական հոգի մը պիտի նսեմանար, նուաստանար։ Ներսէս փայլեցաւ իւր բնութեան բոլոր ճոխութեամբն, բարձրութեամբն։ Հովանդակ ազգի մը սիրտն իւր կրծոց մէջ սրոփեց. իւր հոգին այնչափ մեծացաւ, ընդարձակեցաւ որ կրցաւ ամփոփել յինքեան Հայութեան հոգին. այն անհուն գթութիւնն, զոր կ'զգար իւր ժողովրդեան վրայ, այլակերպեց զինքն. կանգնեցաւ,

երևոյթ նորանշան, տխուր և արի, մրրկէն յետոյ ծիածանի կամարին ներքև, և մի ձեռքով կը Հայ-ցէը շնորհ, մինչ միւսով կ'օրհնէը զգահն Օսմանեան: Այս տեսիլով պիտի ապրի նա մանաւանդ պատմութեան ու Հայ ժողովրդեան յիշողութեան մէջ: Ճշմարիտ Հայը իւր Ազգին, չբաւականացաւ երկնային մխիթարութեանց խոստումներով, այլ ջանաց թեթևեալ նորա աշխարհային բեռն և դիւրել նորա առջև յառաջդիմութեան և բարօրութեան ուղին: Այն հիանալի Ճգտունքն, զորս Ճգնեցաւ նա առ այս, չպիտի մոռցուին երբեք, նոքա իւր փառաւորագոյն տիտղոսքն են անմահութեան ու ազգային յաւէրժական երախտագիտութեան: Ի՞նչ փոյթ որ քննադատեցաւ յոմանց իւր ընթացքն. քանի՞ք կը քննադատեն վարէն գնաւապետն որ հոն վերն լայնագոյն հորիզոն մը կը տեսնէ ու լաւագոյն ուղին կ'որոշէ խուզերու և անդնդոց մէջէն. ո՞չ ապաքէն նոյն ինքն Օգոստափառ Վեհապետն գնահատեց անկեղծութիւնն Ներսէսի նպատակաց ու մեծապարգև մեծարեց նորա անյեղլի հաւատարմութիւնն: Ի՞նչ էին այդ նպատակք.— Բարօրութիւն և զարգացումն Հայոց ընդ հովանեաւ Օսմանեան Պետութեան:

Զեմք սխալիր եթէ ըսեմք թէ Ներսէսի գահուն քով պահ մ'իր առաջնութիւնը կորոյս նոյն իսկ Մայր Աթոռն. կարծես, Հայութեան կեդրոնը տեղափոխեցաւ, ու ամէն Հայոց սիրտք, որ զրօշի տակ ալ չլինէին, դարձան ի Պոլիս: Ի՞նչ կ'ըսեմ, ո՞չ ապաքէն Մայրենի եկեղեցւոյ գրկէն բաժանեալ եղբարք նոր հրապոյր մը յանկարծ գտան ի նմա,

և բազումք, նոր Հովուապետին ախորժալուր սրբինգէն դիւթեալ, վերադարձան ընդհանուր վարդեան։ Հրապոյր. ահա ենչ որ կը բղխէր իրմէ, իւր բովանդակ անձէն, իւր նայուածքէն, իւր խօսքէն ու իւր ձայնէն ու կ'ընդգրկէր ու կը պարուրէր զամէն անոնք որք կը մերձենային իրեն և կը ցոլանար իւր գահոյն վրայ. հրապոյր, ահա այն բառն և ամբողջապէս կը նկարագրէ զՆերսէս, հրապոյր որ կը կազմուէր հեզութենէ, վեհանձնութենէ, ներողութենէ, գթութենէ, խանդէ, իմաստութենէ, հմտութենէ, համեստութենէ, անկեղծութենէ, անուշութենէ, քաղցրախօսութենէ, գեղեցկութենէ, և որոյ անդիմադրելի ձգողութենէն չէին կարող խուսափիլ իւր թշնամիներն ու ատեցողքն իսկ։ Այսու նա սիրելին էր մեծաց, միշտ պաշտելին լինելով խոնարհաց, այսու նա մեծարելի էր գիտնոց և տարփելի ռամկաց, այսու համակրելի ու յարգելի եղաւ օտարաց, և Հայ եկեղեցին, առ աւել քան երբեք վայելեց օտար Եկեղեցեաց և Եկեղեցապետաց համարումն ու սէրն։

Ներսէսի Պատրիարքութեան նշանաւոր հանգամանքներէն մին զանց ըրած կը լինէինք եթէ չյիշէինք իւր հզօր ազդեցութեամբ կրթական գործոյն տրուած մղումը։ Ներսէս, վարժապետի որդի և ինքն իսկ մերթ վարժապետ, անսահման սիրով կը սիրէր դպրոցն։ Իւր ուսուցչութեան տարիներն այնքան սրտայուզութեամբ կը յիշէր որ յայտնապէս կ'երևէր թէ վարժապետի տիտղոսն մեծագին ու վեհ բան մ'ունէր իւր համար։ Մի օր, մըրցանակաբաշխի հանդիսի մը մէջ, ըսաւ հրապա-

ցակաւ թէ «Վարժապետն է ամենէն մեծ մարդն», վճիռ որ իւր մտքին բարձրութիւնն ու հեռատեսութիւնն կ'ապացուցանէ։ Արդարև հաւատք ուներ դպրոցի վրայ. Հայութեան այս անկեղծարան վիճակին մէջ, ի նմա միայն կը տեսնէր մխիթարութեան նշոյլներ, անհատական ու հաւաքական ծաղկման սերմունքն, զարգացման ապահով տարրերքն, և իւր բոլոր զօրութեամբ ոյժ կուտար ամէն կրթական, յառաջդիմական ձեռնարկի։ Իւր շունչն կ'ոգևորէր ամէն կրթական ընկերութիւն, սորա նախագահն էր, նորա խորհրդատուն, ամենուն բարերարն. մէկուն կուտար իւր խօսքն, միւսին իւր գիրն, ամենուն իւր դրամն. իսկ չտեսնել զինքն կրթական հանդիսից մէջ ու չլսել իւր ձայնն օրհնող ու խրախուսող, անսովոր մի բան էր։ Այս ուղղութեամբ որչափ աւելի մեծ քայլեր առած պիտի լինէր Ազգն եթէ յաճախ իւր հուր փափաքներ ու ջերմագին հրաւէրներ անպատասխան չմնային այլոց կողմանէ. Շահնազարեանի, իւր ձեռակերտ «լուսարան»ին, աւերակներն իւր սրտին վրայ կը մնային. աւաղ, իւր վերջին հայեցուածք չկարողացան տեսնել հաստատուած Կեդրոնական վարժարանն, որոյ գաղափարն միւն էր իւր ամենէն աւելի գգուած գաղափարներէն և որոյ վրայ դեռ կը խորհէր իւր մահճին մէջ մահամերձ։

Ո՜հ, շատ վշտեր կային Ներսէսի հոգւոյն մէջ, շատ վէրքեր կ'արիւնէին ի նմա. տխուր մտածութեանց մէջ նա անշուշտ փչեց իւր վերջին շունչն։ Այն միայնութիւն, ուր մեռաւ, կը պատկերէր այն ամայութիւնն ուր ապրեցաւ գրեթէ. քիչը կը

հասկնալին զինքն, ամենէն քիչ նոքա որք իւր բարեկամներն կ'անուանէին զինքեանս բարձրաբարբառ. ոմանց ապերախտութիւնն, այլոց գձձութիւնն և բազմաց անտարբերութիւնն կը կանգնէր յաճախ իւր առջև և դառնութեամբ կը լնուր իւր սիրտն. հիւանդութեան տագնապներուն կը խառնուէին իւր հոգւոյն տագնապք որք անտարակոյս դժնդակագոյն էին. արդեւ մ'էր որ կը չարչարուէր վանդակի մը մէջ կամ չէր կարող, ի գոյէ օգոյ, բանալ իւր թեւեր։ Եւ մեք, անկրաւ, չհասկնալով Փեզիքական ու բարոյական այդ կրկնակի տագնապներ, այն ջլատուած որուն ի հարկէ կը դապարարուէին իւր խորհուրդքն ու ճգունք, խրստադատ կը պահանջէինք ի նմանէ մեր ամէն ցաւոց սրագ դարմանն և ի յանցանս կը գրէինք նմա մեր ճակատագրին անկրաւութիւնքն, մեր անբզդայութեան հեգնանքն, հետզհետէ յառաջացող մարմնային աւերումի մը պատճառած տկարութիւնքն։ Այդ ջլատման զգացումէն էր որ յառաջ կուգային իւր հրաժարականք, որ միշտ անկեղծ էին և որոց միշտ յաղթեց տակայն Աղգին սէրն, մինչև որ իւր վերջին հրաժարականին հետ իւր հրաժեշտ ողջոյնն ալ ընծայեց աշխարհի, հազիւ քառասունեւեօթնամեայ։

Կեանք կարճատև, բայց որչափ լցեալ, որչափ վսաւաւոր, կեանք մ'որ կոտորակուելով սիսկ կը-նար մէկէ աւելի մարդոց անմահութեան գրաւականներ ընծայել։ Իրաւամբ ասա Ներսէսի հոգին կ'երթայ խառնուիլ իւր անուանակից երջանկայիշատակ Հայոց դասուն, մինչ իւր նուիրական նեխարք

պիտի հանգչին Մայր-Եկեղեցւոյ գմբէթին ներքև։ Այն ազգային մեծ սուգն, որով կը սգամք նորա կորուստն, պատիւ կը բերէ անշուշտ մեր զգացումներուն և կը հրճուեցնէ նորա տուներն։ Բայց պէտք նաև զիանալ թէ լոկ սուգ, պսակ, արցունք բաւական չեն, եթէ մեր վշտին աւելի գործնական ցոյցերովն չապացուցանենք թէ արդարև սիրելի պիտի լինի մեզ յաւէտ իւր յիշատակն։ Մեծ մարդիկ իրենցմէ յետոյ կը թողուն իրենց մտածութիւնքն և լուսաշաւիղ հետքն իրենց քայլից, և նոքա, որք սիրեցին զնոսա, կրնան կերպիւ իւրք շարունակել նոցա կեանքն ապրուելով նոցա ոգիէն ու հետևելով նոցա գործոց։ Թող ուրեմն Ներսիսի շիրիմն դպրոց մ'ըլլայ մեզ ազգասիրութեան, եկեղեցասիրութեան, եղբայրսիրութեան, կրթասիրութեան. թող կրօնաւորին խոնարհութիւն, քրիստոնէական սէր և անձնուիրութիւն ուսուցանէ, մեծատան,—զոհողութիւն և բարեգործութիւն, ժողովրդեան—համերաշխ ու անվհատ գործունէութիւն, և յոյս ու հաւատ ներշնչէ մեզ ամենուս։

Ռ. Պ.

ԻՄ ԵՐԳ

Շուտով, իմ քաղցր երգեր,
Դուք պիտի լռէք,
Անցան իմ պայծառ օրեր,
Գալու չեն երբէք։

Իմ երիտասարդ հասակ
Ծաղկի պէս անցաւ,
Նախ քան աշուն շատ արագ
Նա թառամեցաւ։
Սոխակ վերջինն երգումէ
Ամառն անցած,
Ծաղիկն ևս թառամումէ
Գլուխը խոնարհած...
Սոյնպէս ահա կը լրանէ
Երգս օրհնարան,
Սոյնպէս պիտի թառամէ
Տաղանդս յաւիտեան։

Իշխան Բագրատունի։

ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔԻ ԱՊՐԵԼ ԲԱՂԴԱՒՈՐ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ։

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ, ՔԱԶՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՆՔՆԱԶՍՊՈՒՄՆ.

Աշխատիր երբեւ թէ յաւիտան պիտի ապրիս,
Ազօթիր երբեւ թէ այսօր իսկ պիտի մեռնիս։

Առանց աշխատութեան օգնչին չէ կարելի հասնել։ Ինչ որ լաւ և վսեմ բան կայ մարդի մէջ, աշխատութեամբ է ձեռք բերվում։ Ոչ թէ աշխա-

տութիւնը, այլ պարտաւորութիւնն է կործանում մարդին։ Ծուլութիւնը ուտումէ սիրտը նոյնպէս, ինչպէս որ ժանգը ուտումէ երկաթը։ Ծուլութիւնը մեկերպ ստորացնումէ թէ անհատ անձերին և թէ ամբողջ ազգերը, ծոյլ մարդիկը երբէք ոչինչ լաւ բան չեն արած և երբէք ոչինչ անելու չեն։ Ծոյլները միշտ անյաջողութիւններին հանդիպումէին և միշտ պիտի հանդիպեն։ Նոքա երբէք յառաջադէմ գործ չեն կատարած։ Ծոյլները վնասակար, անօգուտ, միշտ գանգատող, ձանձրացող և անբաղդ մարդիկ են։ Նոքա ոչ երբէք և ոչնչով գոհ չեն լինում, երբէք չեն լինում առողջ ոչ մարմնով, ոչ հոգով։

Ծուլութիւնը ամեն չարիքի աղբիւր է, ամեն արատների մայր է, եօթն մահացու մեղքերից մին է։ Ո՛րքան մարդիկ գող և աւազակ են դարձել միայն նորանից, որ նոքա ծուլանումէին իրանց հացը ազնիւ աշխատութեամբ հայթայթելու։ Քրիստոնէութեան առաջին աւաքեալները ցոյց տուին մեզ աշխատութեան օրինակ։ Պօղոս առաքեալը պարծենումէր նորանով, որ աշխատումէր իւր ձեռներով և երբէք ոչոքին ծանրութիւն չէ եղել։ Բենիֆատոս գնաց Անգլիա քրիստոնէական կրօնը քարոզելու մի ձեռին աւետարան և միւս ձեռին հիւսնի գործիքներ ունենալով։ Անգլիայից նա վերջը Գերմանիայ գնաց, որտեղ ժողովրդին կառուցանելու արհեստ սովորեցրեց։

Անդադար և միևնոյն ժամանակ օգտաւէտ պարապմունքի սովորութիւնը բաղդաւորութեան և բարեկեցութեան անհրաժեշտ պայման է թէ

տղամարդիկները և թէ կանանց համար և լաւագոյն միջոց է ձանձրոյթ չդգալու։ Այն մարդի համար, որը սովորած է անցուցանել բոլոր կեանքը օգտաւէտ պարապմունքով, իւրաքանչիւր րոպէն նշանակութիւն ունի, և երբ ազատ ժամանակ կհանդիպի, նա նորանից օգուտ է քաղում վայելչութեամբ։

Յաջողութեան յոյսով աշխատել, օգտաւէտ զբաղմունք դտնել,—ահա այս է բաղդաւոր լինելու լաւագոյն միջոցներից մին։

Քաջութիւնը երևումէ, երբ մարդը լռելեայն զօրումէ երան համբերութեամբ տանելու ամենայն չարչարանքներ պարտքի և խղճմտանքի համար։ «Ես աւելի յօժարութեամբ կհամաձայնեմ վնասվելու արդարութիւնն յայտնելով, ասումէր մի յայտնի անգլիացին, քան թէ խմանամ, որ արդարութիւնը կվնասվի իմ լռութենից»։

Ճշմարիտ քաջութիւնը չէ արգելում մարդին բարի լինելու։ Ընդհակառակն, մենք յաճախ տեսնումենք, որ բոլորովին քաջ մարդիկ շատ մեղմ և հեզ բնաւորութիւն ունին։ Օրինակ, Նէլսիրը, որը Անգլիայի պատերազմի միջոցին Իսպանիայի դէմ քաջութեան հրաշքներ արեց, երբէք որսի չէր գնում, որովհետև անբան կենդանին եղուր սպանելու միտքն անգամ անտանելի էր նորա համար։ Յեսոյ Լիւտէրը, աշխարհիս մէջ ամենից շատ կրօնի համար մահը յանձն առնելու, ամենատեսակ չարչարանքներ տանելու պատրաստ մարդը, սիրումէր մանուկներին, ծաղիկներ և երաժշտութիւն։ Նորա եռանդը և քաջութիւնը

չէին արգելում նորան կնոջ պէս բարի քնքոյշ սիրտ ունենալու։

Քաջ և ազնիւ տղամարդը վեհանձն է և ամեն դէպքում ազնուաբար է ներգործում։ Նա օգուտ չի քաշի մինչև անդամ իւր թշնամու նեղ դրութենից, չի յարձակի այն մարդի վերա, որը ոյժ չունի պաշտպանվելու։ Վեհանձնութեան այսպիսի օրինակները պատահումեն պատերազմի միջոցին ևս։ Օրինակ, Դեմոտինդէնի մօտ եղած ճակատամարտում Ֆրանսական հեծելազօրի գունդը յարձակեցաւ անգլիական զօրքի վերա։ Հեծելազօրի գլուխ կանգնած Ֆրանսական երիտասարդ սպան կամենումէր ընկնել անգլիական զօրքի առաջնորդի վերա, բայց երբ նկատեց, որ նա ունէր միայն մի ձեռք, որով բռնած ունէր իւր ձիու սանձը, Ֆրանսացին քաղաքավարութեամբ յարգանք մատոյց նորան թրով և արշաւեց առաջ։

Ահա դարձեալ մի դէպք Ֆրանսական բանտերի գերօրինակ արիութեան և անձնանուիրութեան։ Այս դէպքը Փարիզում պատահեց։ Շատ բարձր, բայց դեռ բոլորովին չվերջացած տան շուրջը կային փայտամածներ, որտեղ աշխատումէին բանտերը։ Փայտամածներն ամուր չէին և յանկարծ քանդվեցան և նոցա վերա գտնվող բոլոր մարդիկ թափվեցան բարձրից գետին բացի երկուսից — մի պատանուց և մի միջահասակ մարդից։ Նոքա երկոքեան բռնած էին ներսի տախտակի դուրս ընկած փոքրիկ ծայրից, որը արդէն ծալվումէր կախ ընկածների ծանրութենից և մօտ էր կոտրը-

վելուն։—Պետրոս, գոչեց աւելի հասակաւորն, բաց թող տախտակը, մի բառեր, միաքդ բեր, որ ես հայր եմ, ընտանիք ունիմ։—Այո, ճշմարիտ է, պատասխանեց Պետրոսը, և բաց թողեց տախտակը, ընկաւ սալայատակի վերա և մահացաւ, բայց փրկեց ընտանիքի հօրը։

Անկասկածելի է, որ մարդս կարող է իրան սովորեցնել երկիւղի զգացմունքին չենթարկվել նոյնպէս ինչպէս որ կարող է սովորել ուշադիր, աշխատասէր, բարի և ուրախ լինել։

Կանայք տղամարդիկներից պակաս արիութիւն և եռանդ չունին, թէպէտ նոցա աւելի քիչ են պատահում դէպքերն այս յատկութիւնները ցոյց տալու։ Ոչ ոք կանանցից աւելի համբերութեամբ և արիութեամբ չէ տանում տրտմութիւնը և հիւանդութիւնը։ Փորձով ապացուցված է, որ նոքա ընդունակ են դիմանալու ամենամանր փորձութիւններին և թշուառութիւններին բոլորովին նոյն արիութեամբ, ինչպէս և տղամարդիկը, և մենք շատ ենք տեսնում այնպիսի կանանց, որոնք տանումեն ամենադժուար հիւանդութիւնները առանց որևիցէ գանգատների և տրտունջի։

Կանայք առաւելապէս ցոյց են տալիս իրանց արիութիւնը և անսահման հաւատարմութիւնը դէպի պարտքը ողորմածութեան և բարերարութեան գործերում։ Ամենքին յայտնի է թէ ինչ աներկիւղութեամբ ողորմածութեան քոյրերը կապումեն զինուորների վէրքերը նոյն իսկ պատերազմի դաշտում, թշնամիների զնատների կարիքների տակ։ Շատ անգամ նոքա վէրքերը են սատացել ի-

ղանց մարդասիրական պարտքերը կատարելու մի ջոցին։ Ո՞վ չէ լսած Լօնդօնում տիկին Կարպէնտէրի և տ. Սարա Մարտէնի—բանտերի այս եռանդոտ և անվաստակ այցելուներին և վերանորոգողների անունները։

Սարա Մարտէնը որբ էր մնացել մանկութենից և կրթվումէր իւր մեծ մօր մօտ։ Նա շատ բարի և բարեպաշտ էր և մի նպատակ ունէր միայն—ըստ կարելւոյն օգնել թշուառներին։ Դեռ ևս օրիորդ լինելով, նա յաճախ մտածումէր յանցաւորների, բանտարկվածների տխուր դրութեան մասին։ Այս անբաղդները, մեղքերին և անառակութեան մատնված, ամենքից արհամարհված և ձգված, նորա խորին ցաւակցութիւն էին շարժում, և նա վերջը վճռեց բոլոր իւր կեանքը նոցա սովորեցնելուն և ուղղելուն նուիրել։ Բանտը այցելելու թոյլտուութիւն ձեռք բերելով, նա սկսեց ամեն օր քանի մի ժամ բանտարկվածների հետ անցուցանել, կարդումէր նոցա աւետարանը, սովորեցնումէր նոցա կարդալ և գրել, իսկ կանանց բացի սրանից սովորեցնումէր գործել, կարել և ձևել։ Բանտում պատրաստած իրերի վաճառումից գոյացած փողով նա գնումէր նոր նիւթեր, արհեստները սովորեցնել շարունակելու համար։ Տղամարդերին նա սովորեցնումէր յարդեայ գլխարկներ հիւսել, այրական և մանկական գլխարկներ կարել, մինչև անգամ կարկատել, մի խօսքով աշխատումէր նոցա մի բանով զբաղեցնել, որ նոքա պարապ չմնային, իրանց մտքերին անձնատուր չլինէին։ Այսպէս նա բանտը

մի տեսակ վեհթակ դարձրեց, որտեղ ամենքը մեղուների պէս աշխատումէին։ Նոր մտած կալանաւորները երբեմն ընդդիմանումէին նորան։ Սակայն նրա անփոփոխ հեգուութեամբ նա կարողանումէր ստիպել նոցա իրան յարգելու և ուրիշների հետ միացած աշխատելու։

Ցանցանքների մէջ յամառած ձեր մարդիկ, Լոնդոնի Ճարպիկ գողերը, ապականված աղաները, անառակ ծովագնացները, վատաբարոյ կանայք, մի խօսքով այն բազմագոյն բազմութիւնը, որը լրցնումէ սովորաբար մեծ քաղաքի բանտերը, ենթարկվումէր այս բարի կնոջ բարեգործ ազդեցութեանը։ Նորա հսկողութեամբ բանտարկվածներից շատերը իրանց կեանքում առաջին անգամ առնումէին գրիչը ձեռին կամ սովորումէին այբուբեն արժանագին այբբենարանով։ Սարրան դարձաւ նոցա հաւատարմատարը, հսկումէր նոցա, աղօթումէր և լալիս էր նոցա հետ, համակրումէր նոցանից իւրաքանչիւրին։ Նա հզօրացնումէր նոցա բարի դիտաւորութիւնների մէջ, քաջալերումէր յուսահատածներին, աշխատումէր ամենքին ուղղութեան Ճանապարհին կանգնեցնել և օգնել նոցա նոր Ճանապարհի վերա։ Բանտարկվածների բանից դուրս գալուց յետոյ էլ, նա չէր դադարում նոցա մասին հոգալուց։ Նոցա աշխատած փողերից նա փոքր դրամագլուխ կազմեց, որը գործ էր դնում ազատվածներին գործ գտնելու և այս կերպով օգնելու նոցա ազնուաբար նոր կեանք սկսելու։

Քաջութեան ուրիշ տեսակ էլ կայ, որը նոյնչափ

անհրաժեշտ կարևոր է կեանքում. այն է ինքնազսպումն կամ իշխանութիւն սեփական անձի վերա։

Այն մարդը, որը չգիտէ իւր ցանկութիւններին դիմադրել, իւր կիրքերի ստրուկ է դառնում։

Բարոյապէս ազատ լինելու համար, անբան կենդանուց բարձր կանգնելու համար, մարդս ոյժ պիտի ունենայ իւր ցանկութիւնների և հակմունքի դէմ պատերազմելու, եթէ կարող են նոքա վնասել նորան կամ ուրիշներին, իսկ այսպիսի ոյժը ձեռք է բերվում միայն ինքնազսպման անդադար վարժմունքով։ Այս ոյժի մէջ է ահա մարդի գլխաւոր գերազանցութիւնը կենդանուց։

Այսպէս օրինակ Հանրի-Մարտին քարոզիչը, որ յայտնի է իւր հեզութեամբ և համբերութեամբ, մանկութեան ժամանակ անհամբեր, զայրացկոտ և չար էր։ Սակայն շարունակ պատերազմի օգնութեամբ իւր վատ հակմունքի դէմ, նա կարողացաւ վերջապէս յաղթել նոցա և դառնալ այն, ինչ որ խիստ ցանկանումէր լինել, այն է բարի և համբերող մարդ։

ԱՌ ՀԱՄԱԿՐԵԼԻ «ՍԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ.

Մանուկ սերունդի ապագայ բաղդը յանձնվում է մի դասակարգ մարդիկների ձեռին, որոնք յայտնի են մեզ ուսուցիչ և դաստիարակ անունով։ Թէ որքան մեծ է ուսուցչի պարտականութիւնն, որ-

պիսի բարեմասնութիւններով պէտք է օժտված լինի այդ նուիրական անձնաւորութիւնը, իմ նպատակս չէ քննադատել նորա բարոյական մասը, այլ մի քանի խօսք նորա մտաւորականի առթիւ։ Նախ որ ուսուցիչը պէտք է լաւ պատրաստված լինի իւր կոչմանը, ընբռնած լինի իւր պաշտօնի վսեմութիւնն և երկրորդ նա լինելու է մանկավարժ։ Մանկավարժ լինելու համար, բացի իւր բարոյական կեանքը կենդանի օրինակ ներկայացնելու, նոյնպէս հարկաւոր է ունենալ իւր արհեստին վերաբերեալ բազմակողմանի հմտութիւն և նամանաւանդ մանկավարժական մասնագիտութիւն, մանկավարժական ուղղութիւն։ Ունինք մենք մանկավարժ ուսուցիչներ, մանկավարժական դպրոցներ, մանկավարժական պարբերաթերթեր,—չգիտեմ առաջինների մասին, իսկ մանկավարժական պարբերական թերթերին գալով պատասխանումեմ.—այո, ունինք մի հատիկ, միայն մի հատիկ «Մանկավարժանոցը»։ Բայց թէ ինչպէս են վերաբերվում այդ մի հատիկ մասնագիտական պարբերաթերթին, քանի հարիւր բաժանորդներով է ապահովացրած, ինչպէս են օժանդակում աշխարհիս քառանկիւնում սփռված Հայ ուսանողները և ուսուցիչները իրանց խելացի կարծիքներով, մտքերով, բարոյական մրցմամբ, առողջ քննադատութիւններով։ Ոչ, ոչ, այդ մի սպասէք Հայ ուսուցչից. թող գեր. խմբագիրը քարը գլխին տայ, գլուխը քարին. իւր հապար ու մի պարտականութիւնները կատարելուց յետոյ տքնի, անքուն մնայ գիշերները, թող մաշէ ուղեղը, բազմաթիւ

լրագիրները, ամսագիրները ստանայ, տուժէ բարոյապէս և թէ նիւթապէս իւր դէմիկը ունենալով. «Մենք մեր պարտքը կատարենք, մնացեալը ունայնութիւն է», թող ինչ կամենումէ անէ, հայ ուսուցչի համար այդ միևնոյն է։ Այսպիսի անտարբերութիւնը ուսուցիչների կողմից իսպառ արհամարհելի կ'լինէր, եթէ նիւթապէս ևս ապահովված լինէին։ Իսկ գալով բարոյական օժանդակութեանը, կարծեմ իրաւունք չունին վիրատրանութեան. այո, յանցաւոր են։

Միւս կողմից, «Մանկավարժանոց»ին նըպաստելու պարտական է ամեն մի Հայ, որին զգալի է, ճանաչումէ և գնահատումէ իւր ազգային պատուասիրութիւնը, կամ որին նուիրական է իւր ազգային մանուկների կրթութիւնը, իւր լեզուն և կրօնը, նա մանաւանդ «Մանկավարժանոց»ը, մինչդեռ ես կարծումէի մի անմատչելի կամ անմարս հրատարակութիւն մեզ նման հասարակ մահկանացուների համար, (գոնէ իւր ճակատին դրոշմած անունին նայելով միմիայն ուսուցիչներին նուիրված կարծումէի), և ահաւասիկ գերապատիւ խմբագրից ինձ նուէրի արժանացրած 1885 թուի վերջին (հինգերորդ) համարը ամենայն ուշադրութեամբ կարդումեմ—սկզբից մինչև վերջը։ «Հայերը և հայկական եկեղեցեն», «Զվեցէրիայի, Իտալիայի և Իսպանիայի ազգային լուսաւորութեան մէջ քանի մի խնդիրներ անցեալ թուում», «Բարոյախօսութիւն», «Ինչպէս պէտք ապրել բաղդաւոր լինելու համար», «Զմեռն», «Խմբագրական յիշատակարան» և այլն. ահա բովան-

դակուԹիւնը։ Ուրեմն, «Մանկավարժանոց»ը իւր ընդարձակ բովանդակուԹեամբ է ազգային, պատմական, բանասիրական և մանկավարժական ԹեմԹ, և ԵԹէ ընդհանուր բովանդակուԹենից հանենք ժողովրդական դպրոցի ուսուցիչը և սրենակելի դաս կրօնից, որոնք լոկ մասնագիտական են, մենք գտնումենք, որ «Մանկավարժանոց»ը բացի մանկավարժ ուսուցիչներից նոսա պիտանի և օգտակարագոյն հրատարակուԹիւն է ամեն դասակարգի մարդիկների համար, ԹէԵրիտասարդ գոյգերի և ԹէԵրկսեռ ծնողների։ (Խորհուրդ եմ տալիս ամենքին ձիւռք բերել և կարդալ «Հայերը և հայկական եկեղեցին» և «Ինչպէս պէտք է սպրել բաղդաւոր լինելու համար»)։

Երկու խօսք «Մանկավարժանոց»ի խմբագրին։ Գերապատիւ Հայր Խմբագիր, Ազգի լուսաւորուԹեան ծառայողների դատակնիքն է. գրկանք, հաշածանք, արհամարհանք, բամբասանք և մինչև անգամ սուր և անարգ գրսարտուԹիւններ։ Իսկ գալով դէպի Ձեր սրբազան անձնաւորուԹիւնը, գիտենալով Ձեր տոկուն և անսայԹաք բնաւորուԹիւնը, հաստատ կամքը, բարոյական ոյժը, եռանդը և խանդը և Ձեր ընտրած և պաշտած պաշտօնում անձնուիրուԹիւնը, վստահ ենք, որ երբէք զոհ գնալու չէք հոսանքներին, այլ քաջամարտիկ զինուորի պէս սրբման և պատերազմի դաշտում կամ կ'մեռնէք և կամ կ'մեռցնէք. երկու դէպքում ևս յաղԹուԹիւնը տարած կ'լինէք։

Գերապատիւ Հայր խմբագիր, իմ համակրուԹիւնը դէպի Ձեր ձեռնարկուԹիւնը լոկ ֆրազ չճա-

նաչվելու համար, խնդրումեմ Ձեզ, բարեհաճեցէք ինձ ուղարկել համակրելի «Մանկավարժանոց»ի 1886 թուում լոյս ընծայելի բոլոր համարներն իմ հասցէին։ Ահաւասիկ նամակիս ծոցով ուղարկեցի երեք ռուբլի տարեկան բաժանորդագինը։ Կրկնումեմ, ցաւալի է, որ ազգային լուսաւորութեան դրօշակները, որոնք պարծանքով պիտի նպաստէին «Մանկավարժանոց»ի բարգաւաճմանը և յառաջադիմութեանը, բարոյապէս թէ նիւթապէս, դժբաղդաբար սառն անտարբերութիւն են կրում իրանց Ճակատներին։ Կգայ ժամանակ (երանի ուշ չ՝լինի), որ պիտի սթափեն և ուղղեն իրանց սխալը։ Ցուսանք և սպասենք։

Ազգիս յառաջադիմութեան նախանձախնդիր
և. ազգային եկեղեցւոյ անձնանուէր և հաւատարիմ որդի Աւետիս Ասլանեան։

ԿԱՆՈՆԱՒՈՐ ՄԱՐԴ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ՃԱՇԱԿԸ.

Մեր ընութիւնը հետազօտելով, մենք գտնումենք նորա հիանալի յատկութիւնների մէջ գեղեցկութեան զգացումն կամ ըմբռնումն։ Նորա ընձիւղը գտնվումէ բոլոր մարդիկների մէջ և չկայ մի յատկութիւն, որը նորանից աւելի ընդունակ լինի զարգանալու։ Ուրեմն թէ՞նչի արդեօք այս զարգացումն չէ հոգացվում ամենքի մէջ։ Նկատե-

լու է, որ ամբողջ տիեզերքում գտնված գեղեցկութեան զգացման աղբիւրները անվերջ են։ Ա-բարչագործութեան մի փոքր մասը միայն մենք կարողանում ենք գործածել մեր մարմնին սնունդ, զգեստի բաւարարութիւնների համար։ Իսկ ամբողջ արարչագործութիւնը կարող է ծառայել գեղեցկութեան զգացմանը։ Գեղեցկութիւնն ամեն տեղ կայ։ Գեղեցկութիւնը բացվում է դարնան անթիւ ծաղիկների մէջ։ Նա ծածանվում է ծառերի ճիւղերի և դալար խոտերի մէջ։ Նա բնակում է երկրի և ծովի անդունդների մէջ և փայլում է խեցեմորթ զեռունների և ակնեղէնների գոյների մէջ, եւ ոչ միայն այս թոյլ իրերը, այլև ովկիանոսը, սարերը, ամպերը, երկինքը, աստղերը, ծագող արեգակը և մայր մտնող արեգակը, այս ամենը լցված է գեղեցկութեամբ։ Տիեզերքը նորա տաճար է։ Այն մարդիկ, որոնք կենդանի կերպով են զգում գեղեցկութիւնը, չեն կարող աչքերը բաց ձրացնել, որ նա չպատէ չհիացնէ նոցա ամեն կողմերից։ Գեղեցկութիւնն այնքան թանկ է, նորա տուած վայելչութիւններն այնքան նուրբ և մաքուր են, այնքան մօտ են մեր ամենազնիւ և ամենաքնքուշ զգացմունքին, այնքան մօտ է Աստուածպաշտութեանը, որ շատ ցաւալի է մտածել այն բազմաթիւ մարդիկների մասին, որոնք ապրում են երկրի վերա իբրև կոյրեր, կարծես թէ այս գեղեցիկ երկրի և այս փառաւոր երկնակամարի փոխանակ նոքա ապրում լինին անլոյս մի արգելանոցի մէջ։ Անվախճան ուրախութենից զրկված է աշխարհը գեղեցկութեան զգացումն չմշակե-

լուց։ Որքան ցանկալի է, որ բացվէին ամենքի աչքերը, հասկանային և զգային գեղեցկութիւնը և վեհմութիւնը, որոնք անուշադիր են մնում։ Մինչդեռ իւրաքանչիւրը, հարուստը թէ աղքատը, քաղաքացին թէ գիւղացին ապրումէ աստուածային ճարտարապետի գործերով շրջապատված։ Որքան բարձրացած, ազնուացած կլինի մարդի գոյութիւնը, եթէ նա կարողանար զգալ այս գործերի ձևերի, գոյների, յարաբերութիւնների մէջ փայլող փառքը և ըմբռնել նոցա բարոյական իմաստը։

Ես խօսեցի միայն բնութեան գեղեցկութեան մասին, բայց այս խորհրդաւոր հրապոյրը գտնվումէ նոյնպէս գեղարհեստների մէջ, և մանաւանդ գրականութեան մէջ։ Ամենամեծ ճշմարտութիւններին, երբ նոքա կապված չեն լինում գեղեցկութեան հետ, մի բան պակասումէ։ Ալֆրէդ դը-Միւսսէ (մեր Ֆրանսիայի երեք մեծագոյն բանաստեղծներից—Լամարտին, Վիկտոր Հիւգո) յայտնած է սոյն միտքը այս գեղեցիկ ոտանաւորով.

La beauté, sur la terre, est la chose suprême,
C'est pour nous la montrer qu'est faite la clarté.
Rien n'est beau que le vrai, dit un vers respecté;
Et moi, je lui réponds, sans crainte d'un blasphème:
Rien n'est vrai que le beau, rien n'est vrai sans beauté.

(Գեղեցկութիւնը երկրի վերա վեհմ բան է՝ մեզ նորան ցոյց տալու համար է միայն ստեղծված լոյսը։ Միայն ճշմարտութիւնը գեղեցիկ է, ա-

սումէ մի յարգելի ոՀ։ Իսկ ես պատասխանում-եմ նորան առանց վախենալու հայհոյելուց. միայն գեղեցկութիւնն է Ճշմարիտ, առանց գեղեցկու-թեան չկայ ոչինչ Ճշմարիտը։)

Ճշմարտութիւնները աւելի հաստատ և աւելի հեռու են մտնում հոգու մէջ, երբ նոքա զգե-ցած են լինում գեղեցկութեան բնական զար-դարանքը։ Նա չէ ստանում մարդավայել Ճշմա-րիտ կրթութիւնը, ում մէջ գեղեցկութեան զգացումն մշակված չէ, և մի այնպիսի վի-Ճակ, դրութիւն չգիտեմ, որին այս Ճաշակը չյարմարէր։ Ամենայն շռայլութենից սա ամե-նարժանագին և ամենահեշտ է և ինՁ աւելի նշա-նաւոր է երևում մանաւանդ այն կարգի մարդիկ-ների համար, որոնք ծանր աշխատութիւն կրելով բրտանումեն խելքով։ Գեղեցկութեան զգացման ընդհանուր ծաւալումն հին Յունաստանի մէջ, և երաշժտական Ճաշակին — նոր Գերմանիայի մէջ, մեզ ցոյց է տալիս թէ ժողովուրդը ընդունակ է բաժանելու այս նուրբ վայելչութիւնները, որոնք մինչև այժմ համարված էին միայն սակառամասնութեան արտօնութիւն։

Ի՞նչ է գեղեցկութիւնը։ Սա մի հարց է, որին ամենաթափանցիկ խելքերը չեն պատասխանած բաւարար կերպով։ Կասեմ միայն, որ արարչագոր-ծութեան արտաքին գեղեցկութիւնը սերտագոյնս կապված է հոգու ամենասքանչելի, ամենամեծ ստորոգելիների հետ։ Գեղեցկութիւնը նոցա նշան կամ արտայայտութիւն է։ Նիւթը մեզ համար գեղեցիկ է դառնում, երբ նա կարծես թէ կորց-

նումէ իւր նիւթական տեսքը, իւր տարտամութիւնը, իւր վանձանաւորութիւնը, իւր կոշտութիւնը, երբ նորա ձևերի և շարժմունքի եթերական թեթևութիւնը կարծես մոտեցնումէ դէպի հոգին, երբ նա մեզ նկարագրումէ քաղցր և մաքուր զորոյները, երբ նա տարածվումէ անչափ տարածութեան մէջ, կամ երբ պատկառելի ձևերով կամ շարժմունքով նա մեզ Ամենակարօղի մասին է բարբառում։ Ուստի արտաքին գեղեցկութիւնը կապ ունի իւր անեղեռոյթ պայմանների հետ, նա մտային իրերի ցոլացումն է, և հեռաւոր եթէ կամենումեն նորան տեսնել և զգալ կենդանի կերպով, հարկաւոր է մշակել բարոյական, կրօնական, մտաւորական և ընկերական սկզբունքը, որոնք հոգեկան բնութեան փառք են։ Այս ասումեմ, որ մարդիկ համոզվին թէ սերտ ներդաշնակութիւն կայ կրթութեան ճիւղերի մէջ։ Իւրաքանչիւր ճիւղը օգուտ է տալիս միւսներին և օգտվումէ նոցանից։ Նպատակին հասնելու համար, գեղեցկութեան ճաշակը մշակելու է մանկութեան առաջին տարիներից։

ԱՐԴԱՐԵՒ ԱՅՐՍ ԱՅՍ ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԷՐ.

(Մարկ. ԺԵ. 39.)

Գնումէր անտրտունջ փչեայ Ճանապարհ,
Ուրախ տանումէր խօսք, վարմունք վատթար,
Խիստ արդարութիւն քարոզող բերան
Զմերժեց տգէտ, այպանող խուժան։

Գնումէր անտրտունջ—և խաչից ազգերը
Կտակ լսեցին. եղբայրութիւն, սէր։
Մեղքի խաւարով պատած չար աշխարհ
Սուրբ արիւն խրմեց փրկվելու համար։
Անհաւատ դարիս ով թոյլ որդիներ,
Մթթէ չէ յայտնում այն հրաշք պատկեր
Ձեզ մարդի կոչում, մթթէ չէ կանչում
Ձեր կամք առ քաջ գործ և ոչ կեր ու խում։
Ոչ, չեմ հաւատում, թէ մեռած լինին
Ճշմարիտ սրտեր, և մարդիկներին
Վիճակված լինին ի ժառանգութիւն
Արծաթասիրութիւն և ունայնութիւն։
Այո, կգայ օր... Եւ կլուսանայ,
Եւ աշխարհ նոր կեանք, նոր ոյժ կստանայ,
Եւ կընորոգէ մեր մոլար բնութիւն
Քրիստոսի անմահ վարդապետութիւն։

Իշխան Բագրատունի։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տեառն յաջողութեամբ Մանկտվարժանոցը սկսեց երրորդ տարին։

Հայ ուսուցիչները, մեծագոյն մասամբ, շարունակումեն դեռ ևս իրանց անապատասէռ լռութիւն և անտարբերութիւն պահել Մանկտվարժանոցի վերաբերմամբ։ Որքան յամառ և կամակոր են մեր ուսուցիչ անուն կրողները իրանց անուսումնասիրութեան մէջ, ևս առաւել յամառ և կամակոր ենք

մենք մեր սէրի և եռանդի մէջ առ հայ դպրոցը, առ հայազն ուսումնասէր և դպրոցասէր ուսուցիչը, մանաւանդ մեր գործունէութեան և անդադար աղօթքի մէջ առ Ամենախնամն հայ ազգին արժանաւոր ուսուցիչներ պարգևել աղաչելով։ Գուցէ չներէք ինձ այսպէս խիստ լեզու բանեցնելու, եթէ բացի մեր խղճի և խելքի վկայութենից, մեր ազգի դաստիարակների մէջ առաւել արժանաւորները չքաջալերէին մեզ անդադար և, փակագծում ասենք, խորին համակրութեամբ և գովեստով չխօսէին Մանկավարժանոցիս մասին։ Այո, այսպէս ընտիր դաստիարակների թիւը շատ սահմանափակ է, բայց կան։ Մի ականաւոր դաստիարակ, որի անունը (իրաւունք ստացած չենք յայտնելու) յարգանքով է յիշվում ընթերցող հասարակութեան մէջ, գրում է մեզ. «Մանկավարժանոցիդ ուղղութեան և ոգուն միանգամայն համակրելով, նախ իմ խորին և անկեղծ յարգանքս եմ մատուցանում ձեզ, երկրորդ—խոստանում եմ այսուհետև իմ ոլորանն թղթակցել օգտակար Մանկավարժանոցիդ, առանց որև է ակնկալութեան, ձեր աշխատասէր եռանդից միայն շարժեալ։ Փշալի ներկայիս շատ բան մը պահանջէք, ապագան միայն կվարձատրէ ձեր անխոնջ ճակատի քրտինքը։ Թող առ այժմ հոսի այդ փրկարար քրտինքը Հայի խոպանացած բարոյական անդաստանի վերայ ոռոգէ և բեղմնաւորէ սորան, բուսուցանէ անուշահոտ ծաղիկներ ի փունջ ձեր քրտնաթոր ճակատին»։ Այս խօսքերը մեզ քաջալերումն ի հարկէ և առաւել եռանդով, (եթէ կարելի է սորանից

առաւել եռանդը), կշարունակենք մեր գործունէութիւնը յօգուտ Հայաստանի եկեղեցու և հայկական դպրոցի։

Մենք ուխտած ենք մեր վերջին շունչը հայկական դպրոցում աւանդել և կփափագէի, որ գերեզմանս էս հայկական քրիստոնէական դպրոցի կողքին ամփոփվէը, որտեղից անցուդարձ անողը գուցէ կլսէ «Աստուած, օրհնիր, բարեկարգիր, պահպանիր հայ դպրոցը» մաղթանքս։

Ախ, ինչ անտանելի տանջանք է սիրող սրտի համար ստիպված լինել միայն աղաչանքով, փափագներով և բարեմաղթութիւններով առնել անձկալի կարօտը։ Բայց ուրիշ ինչ կարելի էր անել, երբ փափագումես բարեկարգ դպրոց և ոչ մի տեղ չէ կարող աչքդ հանգչել, ամենուրեք ամենայնն խառնիխուռն եւ վայրենի է, Վաղարշակ տրքայի խօսքով ասենք։ Մի թէ այսպէս պիտի վերջանայ կեանքս, և փրկութիւնը չտեսած մահը տեսնեմ և բոլոր մտքերս, փափագներս, դիտաւորութիւններս գերեզման տանեմ...

Մահ,—լռութիւն,—գերեզման,—անդունդ։—Ի՞նչ սարսափեցնող գաղտնիքներ են սոքա այն արարածի համար, որը թիկնածող է անմահութեան, երջանկութեան, կատարելագործութեան։

Ցաւետինական խնդիրներ կանգուն կան միշտ մեր առաջ իրանց անողոք խորհրդաւորութեամբ։ Հաւատը միայն ուղեցոյց պիտի լինի այս անյայտութեան մէջ։ Այո, միայն թէ աշխարհը բարութեան գործ լինէը և պարտականաչութիւնը չխարէը մեզ։ Սիրել Վերինն, բարի առնել, ահա

մեր օրէնքը, մեր փրկութեան խարիսխը, մեր գոյութեան նպատակը։ Քանի որ կայ այս կրօնը, մենք ունինք կատարելատիպ և արժէք ապրելու։ Սիրիր Վերինն, բարի արա ներքև։

Սէրն, անշահասիրութեան, անձնանուիրութեան կրօնը կարժանաւորացնէ մարդին և ազնիւ մարդի սուրբ սեղանները, որտեղ նա մարդկային և ազգային ծառայութեան պատարագ է մատուցանում, ոչ ոք երբէք կարող է կործանել, քանի որ մարդը երան ընդունակ է զգում սիրելու։

Ախալցխայի Ժողովրդի համար առանձին շքեղութեամբ, հիացմամբ և ուրախութեամբ կատարվեցան նոր տարու և Յիսուսի ծննդի տօները, գեղեցիկ երգեցողութիւնները, հանդէսներ, և քարոզներ վայելելով, որոնց խմբագրութեանս հասած երկար նկարագրութիւնները, տեղ չունենալով, չենք հրատարակում այս անգամ։ Առաւել մխիթարական էր Ախալցխայի Ժողովրդին այն, որ ծննդի նաւակատիքի օրը հասաւ Մոսկվայից և կախվեցաւ մայր եկեղեցու զանգակատանը մեծ զանգակը, որը գնվեցաւ Ժողովրդի նուէրներով և Հ. Խորէն Ծ. Վ. Ստեփանէի աշխատութեամբ։

Մխիթարական պիտի լինի նոյնպէս ամենքի համար, որ Ախալցխայի և Ախալքալաքի մտածող և գնահատող Ժողովուրդը, լսելով իրանց հոգևոր հովուի յորդորները, սկսել էին կիւրակէ օրերը փակել խանութները և ներկայ լինել սուրբ պատարագին, կատարելով «յիշեա, սրբել զօր շաբաթու» աստուածային պատգամը։

Շնորհակալութեամբ ստացանք պ. Զաք. Տէր-Զաքարեանի ռուսերէնից թարգմանած Ֆաբրիցիուս դրամա (Արարատ ամսագրից արտատպած)։ Տպագրութիւնը շատ սիրուն է։ Լեզուն ընդհանրապէս հաւանելի է, և բոլորովին կանոնաւոր կլինէր, եթէ թարգմանիչը մի փոքր աւելի միութիւն պահպանէր։ Օրինակ այսպիսի գրականական լեզուի մէջ ջահիլ (եր. 12 և շարունակաբար), խենջար (եր. 12), ուղղդ (եր. 25), էնդուր (եր. 89) բառերը ներդաշնակութիւն չեն կարող կազմել։ Նոյնպէս վ տառ գործածելու մէջ միութիւն չէ պահպանված. մինչդեռ թվում (եր. 5) կռվել (եր. 12) վ տառով են գրված, որ կարելի չէ, կրաւորական ձևը երբեմն վ և երբեմն ու տառով է գործածված. կազդուրուեցի (եր. 13) կասպուել (եր. 13) չարչարվում (եր. 17), կոչվում (եր. 32), գտնվում և գտնուեցի (մի և նոյն 33 երեսում, գրեթէ մի և նոյն տողում)։ Բառեր բարդելը մեր մէջ սովորութիւն է, բայց մահճակալ բառը աւելի հասկանալի և գործածական է քանի թէ անկողնակալ (եր. 54)։ Այսպիսի քանի մի խմբագրական անկանոնութիւնները բաց առնելով, լեզուն մաքուր է և ընթերցողը բան կսովորի։ Գրքի գինը 80 կոպ. է թարգմանչի մօտ, Վաղարշապատում։

Շնորհակալութեամբ ստացանք մեծ. պ. Ռ. Պէրպէրեանից անցեալ 1885 թ. Կ. Պոլսում հրատարակած գեղեցիկ գիրքը Մարդիկ եւ իրք, կրթական եւ դամբանական ճառեր վերնագրով։ Սա մի ընտիր և օգտաւէտ ժողովածու է Երկրագունտ թերթի

1883 և 1884 թուերում հրատարակած յօդուածների։ Եթէ տեղը ներէր, այս գրքի հրատարակութեան և օգտաւէտութեան մասին խօսքը նոյն ինքն պատուական հեղինակին կտայինք, քաղելով նորա նախաբանը, որին Մանկավարժանոցը համամիտ և համակիր է։ Յանկալն էր, որ հայ ընթերցողները ձեռք բերէին այս գիրքը, որից զգալի օգուտներ կքաղէին։ Տպագրութիւնը (Պաղտատեան—Աբամեան) գեղեցիկ է։ Գինը 12 դահեկան է։ Սոյն գրքից Մանկավարժանոցի ներկայ տեսչում քաղեցինք հոգեւոյս Ներսէս պատրիարքի մահի առիթով գրած հրապուրական յօդուածը, ի վայելումն հայասէր ընթերցողների։

Ամէրիկայի Նիւ-Իօրկ քաղաքում 2 միլիոն դոլլարով ընկերութիւնը նոր թատրոն է կառուցանում։ Թատրոնը բացի թատրոնական ընդարձակ հանդիսարանից և բեմից, կունենայ քանի մի համերգական դահլիճներ, ակումբ, ընդարձակ ճաշարան խոհանոցով և մատենադարան։ Այս ահագին շինութեան տանիքի վերա պիտի տնկվի խոկական պարտէզ, նորա ծառերի ստուերների տակ պիտի գտեղվի ճաշարան, անուշարանոց և երաժշտանոցի համար մի վրան։

Անցեալ փետրվար ամսում, Փարիզում գեղեցիկ կանանց աշխարհահանդէս սահմանվեցաւ։ Աշխարհահանդէսին մասնակցելու ընդունվումէին միայն 20—30 ամեայ կանայք։ Բայց բացի ծննդա-

կան վկայականից պահանջվեցաւ արդեօք բարոյական վկայականն էս, թէ բարոյականին ոչինչ նշանակութիւն չտուին—յայտնի չէ։

Վիճելով առաւել խելացի մարդի հետ, յաղթված կմնաս, բայց այս յաղթութենից էս միշտ որևիցէ օգուտ կքաղես։

Վիճիր հաւասար խելք ունեցող մարդի հետ, մի՛ևնոյն է դու կյաղթես թէ նա, վէճը քեզ այն հաճելի համոզումն կտայ, որ դու վիճումէիր։

Վիճելով խելքով քեզանից ստոր մարդի հետ, դու այնու ամենայնիւ կարօղ ես յուսալ, որ այն վէճը նորան օգուտ կբերէ։ Վիճիր անխելքի հետ անգամ։ Արդարև այս վէճը քեզ ոչ օգուտ և ոչ վայելչութիւն կբերէ, բայց երբեմն կծիծաղեցնէ քեզ։

Բայց մի՛ վիճիր երբէք չար և անարգ անձի հետ։

Անցեալ յունվարի 1-ին պիտի բացվէր բոլոր աշխարհի լրագիրների և ամսագիրների արուեստահանդէսը Նիցցայում։ Յանձնաժողովի նախագահն էր երաւաբանութեան դոկտոր Ս. Զարնովսկի։ Պարբերաթերթերի համարներ ուղարկողներն որքան կարելի է մանրամասն տեղեկութիւններ պիտի հաղորդէին թերթի հրատարակութեան հանգամանքների մասին։ Մանկավարժանոցի խմբագրութիւնն իւր ժամանակին ուղարկեց կարգադրիչ յանձնաժողովին իւր հրատարակութիւնը։

Ամէրիկայի Միացեալ Նահանգներում Աւետարանական եկեղեցին ունի 3736 քահանաներ, 779

ուսուցիչներ, 31 Ճեմարաններ, 18 բարձր միջնակարգ դպրոցներ, 19 աստուածաբանական դպրոցներ, 14 օրիորդական դպրոցներ և 34 բարեգործական հաստատութիւններ (որբանոցներ, հիւանդանոցներ, անկիելանոցներ, աղքատանոցներ)։

Գերմանիայի համալսարաններից ամենաբազմամարդ քանի մի տարուց ի վեր Բէռլինին է. անցեալ Ձմեռն համալսարանում կային 4635 ուսանողներ (սոցա թուում 530 ուսանող աստուածաբանական բաժնում)։ Լէյպցիգում—3443 ուսանողներ կան, 669 աստուածաբաններով։ Հալլէ քաղաքում—1585, Գեոտինգէնում—1064, Բոնում—1037, Կեոնիգսբէրգում—900 ուսանող։ Գերմանիայի 22 համալսարաններն ունին այժմ ընդամենն 26,000 ուսանողներ։ 1883 թուից Լէյպցիգի համալսարանում շատանումեն ուսանողները, և այժմ ամենաշատ են. 804 աստուածաբաններ են, 713 իրաւաբաններ, 671 բժիշկներ և 1185 փիլիսոփաներ։

Կովկասեան երկիրը չափազանց հարուստ է հանքերով և բնական բերքերով։ Ձկան, ամենատեսակ պտուղների, բամբակի, մետաքսի, բրդի զբաղմէ առասպելական հարստութիւններին արեւելեան Կովկասում, ծծմբի սարերին, նաւթի ծովին, որ լցնումէ ընդարձակ տարածութիւններ, աւելացան նոր յայտնված արծաթեայ հարուստ հանքեր, իսկ արևմտեան Կովկասում գտնումեն քարածուխի ահագին հանքեր։

Դուքս Բասերբոլի նախագահութեամբ սահմանված մասնախումբը Բիդլենում համարեց այն գումարները, որ հաւաքեցին անցեալ տարի Իշխան Բիսմարկին ընծայելու։ Իր քանակութեամբ սա չեղած ընծայ է աշխարհի ստեղծումից սկսած։ Հաւաքել էին 2 միլիոն 750,049 մարկ, հաւաքելու ծախսերը հանած մնացել է 2 միլիոն 729,143 մարկ (մի մարկ 30 կոպեկ է)։ Այս գումարից ընծայելի Շենհաուզէն կալուածի համար վճարեցին $1^1/_2$ միլիոն մարկ, իսկ 1 միլիոն 229,000 մարկը Բիսմարկը փող ստացաւ։

Այս գումարից հաւաքվեցաւ. Գերմանիայում 2 միլիոն 562,811 մարկ (Էլզաս—Լոռէնում—17,016 մարկ)։ Գերմանիայից դուրս Եվրոպայում 126,061 մարկ (Ռուսիայում 37,852 մարկ)։ Աֆրիկայում 21,000 մարկ, Ամերիկայում—31,000 մարկ, Ասիայում—9,500 մարկ և Ավստրալիայում—21 մարկ։ Ուրեմն ամբողջ գերմանական աշխարհը մասնակցեց Իշխան Բիսմարկին մատուցած ընծայաբերութեանը։

Փարիզի Ֆիգարո (Figaro) լրագրի վարչութենից հրատարակված տեղեկութիւններից երևումէ, որ անցեալ տարի լրագիրը ունեցել է զուտ արդիւնք 2 միլիոն 383,000 Ֆրանկ և լրագրի իւրաքանչիւր բաժ ունեցողը ստացել է 70 Ֆրանկ օգուտ։ Հիմնական դրամագլուխն է 1 միլիոն 200,000 Ֆրանկ։ Այն բաժերը, որոնք անցեալ փետրվարին 995

ֆրանկ արժէքին, այս տարի բարձրացան մինչև 1,200 ֆրանկ։

Մոսկուա բազմաթիւ յարգողք մեր ազգանուր հայերէնագէտ ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ, որ ընտիր ընտիր գրուածներով ճոխացուցել է գիտական գրականութիւնը, որպէս և երկար ժամանակ և արդիւնաւոր աշխատել է մանկավարժական ասպարիզում, — մտադիր են հասարակական համակրանք ցուցանել նորան և ի պատիւ նորա ՅԻՍՆԱՄԵԱՑ արգասաւոր գործունէութեան, մեծարել նորան հանդիսապէս։

Հանդիսիս կարգադրչաց խումբը պարտ համարի անձին, Գերապատիւ հայր, ծանուցանել ձեզ այս մասին, յայտնելով միանգամայն, թէ հանդէսը լինելու է 17/29 ապրիլի 1886 թ. Լազարեան Ճեմարանը, այսպիսի եղանակաւ. մատուցումն ուղերձաց, անձնական շնորհաւորութիւնք, ընթերցումն ողջունական թղթոց, հեռագրաց և այլն։

Ամենայն գրաւոր հաղորդութիւնք խնդրեն ուղարկել Լազարեան Ճեմարանի վերատեսուչ պ. Գէորգ Քանանեանի հասցէին։

Անդլիայում Բրիստոլ քաղաքի մօտ կան որբանոցներ, որոնք հրաշալի կերպով ապացուցանումեն Յիսուսի մի օր ասած այս խօսքի ճշմարտութիւնը.

եթէ փոքր ինչ հաւատ ունենայինք կարող էինք սարերը տեղափոխել։ 50 տարի է ինչ որ որբանոցների հիմնադիր Ժորժ Միւլլէրը սկսեց ընդունել որբերին։ Այսօր նա ունի 2160 որբ, սկզբից մինչև այսօր ընդունել է և կրթել է 6,895 որբ, նա շինել է տուել 5 ընդարձակ տներ 2 միլիոն 875,000 ֆրանկի արժողութեամբ։ Այլև նա պահպանումէ 84 կրօնական դպրոցներ, տարածումէ Ս. գիրքը ամբողջ աշխարհում և բազմաթիւ քարոզիչներին ապրուստ է հասցնում։ Ի՞նչպէս է գրանում Ժորժ Միւլլէրը այս գործերը պահպանելու կարևոր փող... Նա երբէք ոչ ոքից ոչինչ չէ խնդրում. այս նորա սիստէմ է, նա յուսադրած է Աստուծուն և արդարև միշտ ստացել է որքան որ կարիք է ունեցել։ Ահա նորա վերջին զեկուցումից փոքրիկ քաղուած. «Այս առաւօտեան ես ստացայ 6,400 ֆրանկ, բայց օրական ծախսերն այնքան շատ էին, որ ես ստիպված էի տալ մինչև վերջին գրամը և ինձ ոչինչ չմնաց։ Հետևեալ օրը (զեկտ. 8) ես ստացայ 3,500 ֆրանկ, բայց կրկին պէտք եղաւ բոլորը ծախսելու։ Եւ այսպէս մինչև զեկտեմբերի 12 մեր գանձարանում կար 175 ֆր. 40 ս.։ Ես առաջ եմ բերում այս մանրամասնութիւնը, որովհետև մեր ընթերցողներից ոմանք կարող էին ենթադրել թէ 46 տարուց ի վեր մեր հաւատը փորձութեան չէ հանդիպել մեր ապրուստի միջոցների վերաբերմամբ։ Սկզբից ի վեր մենք միևնոյն Հանապարհով ենք գնացել և միևնոյն սկզբունքով ենք ներգործել։ Տես ուրեմն, քրիստոնեայ ընթերցող, թէ ինչ օրհնութիւն է հանգ-

չում նորա վերա ով Ճշմարտապէս ապաւինումէ Աստուծուն, ով չէ ասում լոկ խօսքով, թէ ես ապաւինումեմ Աստուծուն, այլ ով Ճշմարտապէս ապաւինումէ նորան։ Մեր օրական ծախսը միայն օրերի մամաը հասնումէ 1,800 ֆրանկի 40 սանտիմի, և դեկտ. 19-ին մեզ մնումէը միայն 175 ֆր. 40 ս.

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ներքոյ գետեղված Ախլցխայի հայ հասարակութեան արդիւնքով տպված գրքոյկի մէջ յիշված խնդիրներն են Ախալքալաքի և գիւղերի ժողովուրդների կողմից, որոնք ուշ հասած լինելով հասարակութեան ձեռը, հասարակութիւնը թախանձելով խնդրեց մեզ հրատարակել սոցա ի գիտութիւն ընթերցողների։ Խմբ.

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Աստուածաբեալ Հայրապետի և Ծայրագոյն Պատրիարգի Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի և Կաթուղիկոսի ամենայն Հայոց ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԱԿԱՐԱՑ։

Ի քահանայից և ի ժողովրդոց Հայոց Ախալքալաքայ

Ամենախոնարհ խնդիրը

Ցաջորդք վիճակեալք մեզ ի կառավարել և ի բարեգործել զսուրբ եկեղեցիս մեր և զբանաւոր հօտ, նախանձախնդիր գոլով բարեաց և առաջադիմութեան և բարեկարգութեան սրբոյ եկեղեցւոյ, մխիթարէին զմեզ, և զարդիս տնօրէնութեամբ Սրբազան Սինոդիդ շնորհեալն մեզ Գերապատիւ Տ. Խորէն Ծայրագոյն վարդապետ Ստեփանէն ի հոլովութիւն, որ գերօրինակ աշխատասիրութեամբ և ջերմեռանդութեամբ և կեն-

դանի Աստուածպաշտութեամբն իւրով, զերիս նուագս այցելութեամբն առ մեզ յընթացս այսր մերոյ ամի, մխիթարեաց զմեզ ի սիրտ և ի հոգի, յառաջին երկուս նուագս կենդանի առնելով ի մեզ զբանն կենաց աւետարանին հիւսքանչ քարոզութեամբ իւրով և յայսմ երրորդում նուագի մխիթարէ և կենդանացուցանէ սա զմեզ նոյն հոգերուղիս քարոզութեամբ իւրով և օգտակար բարեկարգութեամբք։ Դեր. Յաջորդն մեր կարգեալ հաստատեաց զերգեցիկ խումբ մանկանց հանդերձ ուսուցչաւ յեկեղեցւոջ մերում, յորդոր կարդալով ծնողաց անարդել առաքել զորդիս իւրեանց յուսումն ձայնադրութեան և ի սաղմոսարութիւն եկեղեցւոյ։ Խնամելով զպէտս կարօտելոց կանոնաւորեաց զհոգաբարձութիւն աղքատաց, կազմեալ զայն յերից անձանց, սահմանելով զգանձանակս վասն աղքատաց։ Ընդ սմին ձեռն էարկ յաւարտումն նորոյ շինութեան Հոգւոյս դպրոցի մերոյ և զշինութիւնն հնոյ դպրոցի բարեփոխեալ բաղմօք և յարմարեցուցեալ նուիրատուութեամբք բարեպաշտ եղբարց Դրիգորեան յատկացուցանէ յաջորդարանի, յորմէ զուրկ էր քաղաքս մեր և Յաջորդք և Առաջնորդք իբրև հիւր ժամանէին առ մեզ չունելով եկեղեցական բնակարան։ Եւ որ մեծագոյն է քան զամենայն քաջութիւն հովիւն մեր զուն գործէ յորդորմամբ և քարոզութեամբք զարթուցանել զչերմեռանդութիւն առ եկեղեցիս և կենդանի Աստուածպաշտութիւն, հրաւիրելով զժողովուրդն փակել զխանութս իւրեանց յաւուրս տէրունականս և ներկայ գտանիլ անշուշտ մա-

տուցման կենդանարար և փրկարար սրբոյ պատարագի, կատարելով զմեծ և զխորհրդաւոր պատգամ ի տասն պատուիրանաց։ Կանոնաւորեալ զժամասացութիւն մեր ըստ կարգի Մայր Աթոռոյդ Սրբոյ Էջմիածնի սրբակրօն հովիւն մեր քաղցրացոյց ի լսելիս մեր զկանոնաւոր և քաղցրահնչիւն արարողութիւնս, նորոգելով զհնանալի հանդէսս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ։

Վեհափառ Տէր, թողումք զայլ կարգադրութիւնս և տնօրէնութիւնս անվաստակ մերոյ հովուին յօգուտ և ի պայծառութիւն տանն Աստուծոյ և ժողովրդեանս, զորս մանրամասնաբար յիշել աստանոր ոչ համարձակիմք ի ձանձրոյթ Վեհափառ Տեառնդ։

Այսքան բարեաց և բարեմասնութեանց աշխատասէր քաջ հովուին մերոյ ակնառաւոր եղեալ ի սուղ ժամանակի, ստիպիմք, Վեհափառ Տէր, յորդիական ջերմեռանդութենէ, ի զգացմանց երախտագիտութեան և յարգարութենէ, պաղատանօք անկեալ առաջի Աստուածաբեալ Հայրապետիդ մեծաւ պատկառանօք և ամենախորին ակնածութեամբ մատուցանել զխնդրուածս սրտից մերոց ի ձեռն պատուարժան պատգամաւորաց Ախալցխայ քաղաքի և աղաչեմք և խնդրեմք զՎեհափառ Հայրըդ Հայազն ժողովրդեանս, ընկալեալ զայս մեր խնդիր, որ վասն անձնանուէր հովուին մերոյ, որ դնէ զանձն իւր ի վերայ հօտին իւրոյ, իմաստութեամբ, անշահասիրութեամբ և արդարութեամբ կառավարելով զյանձնեալ իւրումն տեսչութեան ժողովուրդս, արժանի առնել զբազմավաստակ և բազ-

մարդիւն յաջորդն մեր զՏէր Խորէն Ծ. Վարդապետ սրբազան աստիճանի Եպիսկոպոսութեան, մխիթարել և ուրախացուցանել ի հոգևորս զբովանդակ ժողովուրդս վիճակին Ախալքալաքայ։ Որպէս ի սկզբանէ մինչ ցարդ բարեբաղդ գտեալ ենք միշտ վայելել ի տէր հանգուցեալ Հայրապետացն մերոց զարժանապէս վարձատրութիւն արժանընտիր յաջորդ Վարդապետացն մերոց, ածելով զնոսա ի սուրբ աստիճան Եպիսկոպոսութեան, երախտագէտս և երախտապարտս արարեալ զժողովուրդն, նոյն և ի ներկայիս նովին աներկբայ յուսով և ակնկալութեամբ մատչիմք առ Վեհափառ Հայրապետդ և մատուցանեմք զայս մեր խնդիր։

Տէր մեր հոգևոր և սուրբ Հայրապետ, եկեղեցիս մեր և ժողովուրդս ոչ դադարեսցուք խնդրել և հայցել ի Ձէնջ զայս մեծ շնորհ, դարձուցեալ զաչս մեր յարևելեան կոյս, ուստի ծագի լոյս համայն աշխարհի, մինչև արժանի լիցուք ընդունել զայս պարգև մեծագին ի սուրբ Հայրապետէդ։

Այս խնդիրը ստորագրած են Ախալքալաքի բոլոր քահանաները, այլև 225 անձինք քաղաքացիներ և վաւերացրել են իրանց ստորագրութեամբ երկու քաղաքապետներն պ. Արտաշէս Ցովհաննէսեանը և Բագրատ Պիճիկեանը։

Սեպտ. 14-ն 1885 թ.

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Մայրագոյն Պատրիարքի և Կաթողիկոսին ամենայն Հայոց ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԱԿԱՐԱՑ։

Ի քահանայից և ի հասարակութեանց գիւղօրէից վիճակին Ախալքալաքայ։

Վեհափառ Տէր, Մայրս մեր սուրբ եկեղեցին, մխիթարեալ է արդէն իւր սգազգեաց քոյր ուրախութեան փոխարկելով, գտնելով իւր վեհափառ, արժանընակը Հայրապետին։ Գոհութիւն տալով երկնաւոր Նախախնամողին, կ'մատուցանեմք Ձեր Վեհափառութեան Արարատեան Մայր Աթոռի Գահակալութեանդ և սուրբ Օծմանդ որդիական, ամենախոնարհ շնորհաւորութիւն և մեր ամենաջերմեռանդ բարեմաղթութիւնները մեր ազգի և եկեղեցւոյ բարեբաղդութեան համար։ Վեհափառ Տէր, դիտեմք թէ որքան պիտի մխիթարվիք Դուք իմանալով Ձեր Հոգևոր որդւոցս նոր բարեբաղդութիւնը մեր գերապատիւ յաջորդի Խորէն Ծայրագոյն վարդապետ Սաեփանէի գերօրինակ քաջաբերութեան և ջերմեռանդ հովուութեամբ։ Այցելելով երբև հովիւ մեր գիւղօրէից անթարգմանելի մխիթարութեամբ մխիթարեց մեզ ամենեցուն ի սիրտ և ի հոգի իւր եկեղեցական բարեկարգութիւններով և հոգեբուղխ, սրտառուչ քարոզներով։ Մեր յաջորդի քարոզութիւնքը նորոգեցին և կենդանացրին մեզ, ներշնչելով մեր սրտերի մէջ քրիստոնէական հոգի։ Մանաւանդ

գեր. յաջորդը առաւել մեծ և դժուար գործ կատարեց մեր գիւղերում, այն է մնալով 5–6 օր իւրաքանչիւր գիւղում շատ տարիներէ ի վեր կընճռեալ և բոլորովին անհաշիւ մնացեալ երեսփոխանական գործերը, զանազան մասնաւոր անձանց տուած եկեղեցական գումարների մասին, մեծ աշխատութեամբ կանոնաւորեց և հաշիւները համարներով մատեանի մէջ մուծանելով յանձնեց նորընտիր երեսփոխաններին և պատուիրեց այսուհետև ամենախիստ կանոնապահութեամբ վարել պաշտօնը։ Ուստի մենք հոգևորականքս և աշխարհականքս իբրև երախտապարտ որդիք մեր արժանընտիր յաջորդի գերօրինակ և եմաստալի քարոզների և բազմաշխատ և բազմօգուտ եկեղեցական բարեկարգութեանց համար, կաղերսեմք և կընդրեմք Ձեր Վեհափառութենէ ընդունել մեր ամենախոնարհ խնդիրն և մեր արժանընտիր հովուին և Ճշմարիտ աշակերտին Քրիստոսի, Հայր Խորէն վարդապետին արժանացնել եպիսկոպոսութեան սուրբ աստիճանին և այսու լրացնել Ախալքալաքայ վիճակին բոլոր գիւղօրէից հասարակութեանց սրտեռանդ փափագները, որով երախտապարտ կմնամք որդիական խոնարհութեամբ Ձերդ Վեհափառութեան։ Դարձեալ կաղերսեմք և կ'պաղատիմք մի անտես առնել մեր այս ամենախոնարհ և ամենացանկալի առաջին խնդիրը ըստ ամենայնի արժանաւոր վարդապետի և քաջ հովուի համար, որ կ'համարձակիմք մատուցանել և խնդրել շնորհ Մայր Աթոռի Վեհափառ Գահակալէդ առաջին անգամ մեր գաղթականութեան

օրերէն ի վեր, միշտ և յաւիտեան պատրաստ գոլով մեր որդիական պարտքերը անթերի լցուցանելու։

Ամենախոնարհ որդիական ակնածութեամբ համբուրեմք Ձեր Վեհափառութեան Սուրբ աջը։ Ի 10 Հոկտ. 1885 ամի։

Այս խնդիրը ստորագրած են Ախալքալաքի վիճակի բազմաթիւ գիւղերի ժողովուրդները և քահանաները և վաւերացրել են գիւղապետներն իրանց ստորագրութեամբ և իրանց պաշտօնական կնիքներով։

Дозволено ценз. Тифлисъ, 28 Февраля 1886 г.

Типографія И. Мартиросіанца, Орб. у., № 1/2.

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

Մեր ծանուցած պարբերաթերթերի խմբագրողներից խնդրումենք փոխադարձաբար ծանուցանել Մանկավարժանոցիս մասին իրանց թերթերում։

ԱՐԱՐԱՏ

Գրականական, պատմական, բանասիրական ամսագիր. տարեկան գինը Ռուսաստանում 4 ր.։ Հասցէն. Св. Эчміадзинъ, Ред. „Араратъ“.

ԱՂԲԻՒՐ

Պատկերազարդ ամսագիր երեխաների և դաստիարակների համար։ Տարեկան գինն է 3 ման։ Հասցէն. Тифлисъ, Редакція „Агбюръ“.

Խմբագիր-Հրատ. Տ. Նազարեան։

ԱՐԶԱԳԱՆՔ

Քաղաքական-գրականական շաբաթաթերթ. տարեկան գինը 5 ր.։ Հասցէն. Тифлисъ, Ред. „Ардзаганкъ“.

Խմբագիր.-Հրատարակիչ Ա. Յովհաննիսեան։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Ամսագիրը հրատարակվում է Զմիւռնիայում։ Տարեկան գինն է 4 մէճիտիէ արծաթ։ Ռուսաբնակ Հայեր կարող են բաժանորդ գրվել պ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան միջոցով Թիֆլիսում։

Խմբագիր-տնօրէն Մ. Մամուրեան։

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Պատկերազարդ հրատարակութիւն ամիսը երկու անգամ։ Տարեկան գինն է 4 ռ. Ռուսիայում։ Հասցէն. Կ. Պոլիս։ Սուլթան Համամ, թիւ 14։

Հրատարակիչներ. Ն. Կ. Պէրպէրեան և Ս. Տէօվլէթեան։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

1886 թուին Մանկավարժանոց ամսագիրը պիտի հրատարակվի գլխաւորապէս մանկավարժական ուղղութեամբ։ Իւրաքանչիւր երկամսեայ մի տետրը երկու թերթից է։ Ցուլիս—օգոստոս ամիսներում չի հրատարակվի։ Տարեկան գինն է 3 մանէթ։ Ստորագրվողները յատկապէս պիտի դիմեն այս հասցէով. Редакціи Манкаваржаноцъ.

Խմբագրող-հրատարակող ԻՈՐԻՆ Ծ. Վ. ԳԻ Դ. ՍՏԵՓԱՆԻ։

Մ Շ Ա Կ

Գրականական-քաղաքական լրագիր. (շաբաթը 3 անգամ), տարեկան գինը 10 ր։ Հասցէն. Тифлисъ. Ред. „Мшакъ“.

Խմբ.-հրատ. Գ. Արծրունի։

ՆՈՐ-ԴԱՐ

Քաղաքական-գրականական ամենօրեայ թերթ. տարեկան գինը 10 ր։ Հասցէն. Тифлисъ, Редакція Нор-Даръ.

Խմբ.-հրատ. Ս. Սպանդարեան։

Համակեդրոնական Պրոգրամներ—Ծրագիրներ (առաջին փորձ և առաջին անգամ հրատարակված Հայերիս մէջ), աշակերտական կանոններով և դաստիարակների համար հրահանգներով, Խորէն Ծ. վարդ. Ստեփանէի աշխատութեամբ յօրինած, վաճառվումեն Թիֆլիսում Կենդրոնական և Կովկասեան Դրավաճառանոցներում, նոյնպէս Ռոստովում Դոնի վերա Յովհ. Տէր-Աբրահամեանի Դրավաճառանոցում։ Գրքոյկի գինն է 50 կոպ.։